2009, ՕԳՈՍՏՈՍ Բ, ԹԻՎ 16 (300)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԻԹՈՎ

*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքն ենք բերում կրթական հաստատությունների տնօրինություններին, մանկավարժներին եւ դասախոսներին, ուսանողներին եւ աշակերտներին:*

*Մաղթում ենք, որ Աստծո օրհնությամբ արգասավոր լինի նոր ուսումնական տարին, եւ մեր զավակները ուշիմությամբ ու ջանադրությամբ ամբարեն իրենց մատուցվող գիտելիքները, որպեսզի իմացությամբ զորացած կարողանան լավագույնս ծառայել մեր ժողովրդին, մեր Հայրենիքին եւ Սուրբ Եկեղեցուն:*

*Վստահելով լեցուն տարեշրջան ենք մաղթում կրթության գործի բոլոր նվիրյալներին, որ Աստծո օրհնությամբ շարունակեն բազմարդյուն ձեռքբերումներով զարդարել նոր սերունդ կրթելու եւ դաստիարակելու իրենց անխոնջ ջանքերը:*

*Թող մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի շնորհները եւ խաղաղությունը միշտ լինեն մեզ հետ եւ բոլորի. ամեն:*

## Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իտալիայի դեսպանին

Օգոստոսի 28-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում իր դիվանագիտական առաքելությունն սկսող Իտալիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Բրունո Սկապինիին:

Նորին Սրբությունը, բարի գալուստ մաղթելով նորանշանակ դեսպանին, գոհունակությամբ անդրադարձավ հայ-իտալական դարավոր կապերին, Հայ Առաքելական Եկեղեցու եւ Կաթոլիկ Եկեղեցու միջեւ ստեղծված ջերմ հարաբերություններին: Վեհափառ Հայրապետը, ի դեմս դեսպանի, իր շնորհակալությունն ու երախտագիտությունը հայտնեց Իտալիայի իշխանություններին՝ երկրաշարժից եւ անկախությունից հետո Հայաստանին եւ հայ ժողովրդին ցուցաբերած աջակցության եւ օժանդակության համար:

Բրունո Սկապինին շնորհակալություն հայտնեց Հայոց Հայրապետին՝ ջերմ ընդունելության համար եւ ընդգծեց, որ իր համար մեծ պատիվ է լինել հայոց հավատքի կենտրոնում եւ իր ծառայությունը բերել Հայաստանի նման հին քաղաքակրթություն եւ հարուստ մշակույթ ունեցող երկրում: Դեսպանը նաեւ Հայոց Հայրապետին տեղեկացրեց դեսպանության մոտակա ծրագրերի մասին:



Վերջում Նորին Սրբությունը հաջողություններ մաղթեց նորանշանակ դեսպանին՝ իր առաքելությունն իրականացնելու գործում:

Հանդիպման ընթացքում Հայոց Հայրապետը եւ դեսպանը նաեւ մտքեր փոխանակեցին տարածաշրջանային խնդիրների, քրիստոնեական արժեհամակարգի եւ արդի մարտահրավերների շուրջ:

## Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆԸ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ



Օգոստոսի 16-ին՝ Ս. Աստվածածնի Վերափոխման տոնին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում պատարագ մատուցեց Փառեն եպս Ավետիքյանը: Պատարագի ընթացքում սրբազան հայրն անդրադարձավ տոնի խորհրդին եւ Աստվածամոր կերպարին:

Հավարտ պատարագի Մայր տաճարից հայրապետական թափորն ուղղվեց դեպի Ս. Տրդատի բաց խորան, ուր հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ կատարվեց խաղողօրհնեքի արարողությունը: Ս. Ներսես Շնորհալի հայրապետի աղոթքի ընթերցումից եւ հոգեզմայլ շարականների երգեցողությունից հետո Նորին Սրբությունն օրհնեց խաղողն ու տարվա ողջ բերքը:

Արարողության ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական իր օրհնությունը բաշխեց ներկա ժողովրդին, ապա անդրադարձավ Տիրամոր վերափոխման պատումին՝ իբրեւ լավագույն վկայություն ծնողասիրության:

Վերջում միաբան սարկավագներն օրհնված խաղողի ողկույզները բաժանեցին ժողովրդին:

## ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆԸ ՄՈՍԿՎԱՅԻ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Օգոստոսի 16-ին Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդանիստ Ս. Հարություն եկեղեցում մեծ հանդիսությամբ նշվեց Աստվածածնի Վերափոխման տոնը: Օրվա պատարագիչն էր թեմակալ առաջնորդ Եզրաս եպս Ներսիսյանը:

Հընթացս պատարագի առաջնորդ սրբազանը հավուր պատշաճի քարոզ խոսեց եւ մեկնելով տոնի խորհուրդը՝ ի մասնավորի ասաց. «Աստվածամոր կերպարը հայոց կյանքում միշտ եղել է առաջնորդող՝ բոլոր ժամանակներում, քանի որ Տիրամոր կյանքի բոլոր առաքինությունները մենք մշտապես արտահայտված ենք տեսել մեր մայրերի հավատավոր կյանքերի մեջ: Աստվածածինն այնքան սիրելի ու գերապատվելի է եղել, որ եկեղեցի մուտք գործող յուրաքանչյուր հայի՝ առաջին հայացքով սիրալիր ողջունողն Աստվածամայրն է՝ փառավորապես սուրբ սեղանը զարդարած…»:



Պատարագի ավարտին սրբազան հոր հանդիսապետությամբ կատարվեց խաղողօրհնեքի արարողություն, որի ընթացքում բոլոր հավաքվածներն աղոթք վերառաքեցին առ Բարձրյալն Աստված ոչ միայն պտղի, այլեւ մշակողի, ընծայողի, հողագործի եւ հողի համար՝ խնդրելով Արարչից առատ, բերրի, կարկուտից ու սառնամանիքից զերծ տարի:

*ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ*

# Բաղրամյան համայնքում օծվեց Ս. Վարդան եկեղեցին





Օգոստոսի 8-ին Արմավիրի թեմի Էջմիածնի տարածաշրջանի Բաղրամյան համայնքում, ձեռամբ թեմի առաջնորդ Սիոն եպս Ադամյանի, օծվեցին Ս. Վարդան նորակառույց եկեղեցին եւ գմբեթի խաչը:

Հաջորդ օրը Սիոն սրբազանն օծեց սբ սեղանը, որից հետո Մկրտիչ քհն. Մուշաղյանը մատուցեց առաջին պատարագը:

Եկեղեցու բարերարներն են Մեծ Բրիտանիայում (Բեդֆորդ-Քեմփստոն) բնակություն հաստատած տեր եւ տիկին՝ Վարդան եւ Նաիրա Այվազյանները: Եկեղեցու կառուցման աշխատանքներն սկսվել էին դեռեւս 2006 թ.:

Պատարագից հետո եկեղեցում կատարվեց առաջին մկրտությունը, ներկաներին բաժանվեց մատաղամիս:

*Առաջնորդարան Արմավիրի թեմի*

# Աստվածածնի Վերափոխման տոնը Գուգարաց թեմում

Օգոստոսի 16-ին Գուգարաց թեմի բոլոր եկեղեցիներում մատուցվեց պատարագ, եւ կատարվեց խաղողօրհնեքի արարողություն: Սուրբ Աստվածածին եկեղեցու խաչքավոր «Սեզամ-գազ» ՍՊԸ-ի տնօրեն Արմեն Մխոյանի, առաջնորդանիստ Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու խաչքավոր «Մատինյանի նշխար» ՍՊԸ-ի տնօրեն Արմեն Սարուխանյանի եւ Սուրբ Սարգիս եկեղեցու խաչքավոր արվեստագետ եւ տեղի պատկերասրահի տնօրեն Փափագ Ալոյանի կողմից բոլոր ներկաներին բաժանվեց օրհնված խաղող:

Բազմամարդ էր նաեւ Վանաձորի Սուրբ Աստվածածին եկեղեցին, քանի որ Վերափոխման տոնը նաեւ Սուրբ Աստվածածին եկեղեցու ուխտի օրն է: Այս առթիվ Աստվածամոր անունը կրող եկեղեցում, հանդիսապետությամբ Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ եպս Չուլջյանի, մատուցվեց պատարագ, ապա սրբազան հոր ձեռամբ կատարվեց խաղողօրհնեքի արարողություն:

Վերափոխման տոնը կրկնակի ուրախալի էր «Ծիծեռնակ» ճամբարի երեխաների համար: Այդ օրը պատարագ մատուցվեց նաեւ ճամբարում գտնվող «Սրբոց Մանկանց» մատուռում, որի ավարտին օրհնվեց եւ երեխաներին բաժանվեց խաղող: Պատարագի ավարտին օրհնվեցին ճամբարում հանգստացող բոլոր Մարիամները: Այնուհետեւ Սուրբ Աստվածածին եկեղեցու խաչքավոր Արմեն Մխոյանի կողմից ճամբարականներին բաժանվեց մատաղ:

*Դիվան Գուգարաց թեմի*

# ԵՀԽ կենտրոնական կոմիտեի նիստը Ժնեւում

Օգոստոսի 26-ից սեպտեմբերի 2-ը Ժնեւում տեղի ունեցավ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնական կոմիտեի նիստը, որի ընթացքում ընտրվեց նոր գլխավոր քարտուղար, որոշվեց ԵՀԽ 10-րդ ասամբլեայի անցկացման վայրը, ինչպես նաեւ քննության առնվեց անդամ եկեղեցիներին վերաբերող այլ հարցեր:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ԵՀԽ կենտրոնական կոմիտեի հանդիպմանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մասնակցեցին ԵՀԽ կենտրոնական կոմիտեի անդամ Վիգեն արք. Այքազյանը եւ գործադիր վարչության անդամ, երեցկին Փոլա Դեւեջյանը: Իսկ ԵՀԽ կենտրոնական կոմիտեում երիտասարդ սպասավորի հանգամանքով իր ծառայությունը մատուցեց Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի աշխատակից Ցոլակ սարկավագ Հարությունյանը:

# «ԱՐԻ ՏՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՓՈՒԼԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Օգոստոսի 18-ին ՀՀ Սփյուռքի նախարարության «Արի տուն» ծրագրի հերթական փուլի սփյուռքահայ 60 երիտասարդ՝ ժամանած Ռուսաստանից, Վրաստանից, Իրանից, Ֆրանսիայից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Գերմանիայից, այցելեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ուր հանդիպեց Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան աբեղա Նավասարդյանի հետ:

Հայր սուրբը, բարիգալստյան մաղթանքից հետո, իր խոսքում անդրադարձավ հայապահպանության խնդրին՝ վերջինիս համատեքստում կարեւորելով հայրենիքի հետ կապը, հավատարմությունը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն, հայոց լեզվի իմացությունը եւ երիտասարդների ունեցած դերակատարությունն այդ գործում:

Հանդիպումից հետո երիտասարդներն այցելեցին նաեւ Մայր Աթոռի թանգարանները:

# ՕԾՎԵՑ ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ



Օգոստոսի 20-ին, ձեռամբ Գեղարքունյաց թեմի առաջնորդ Մարկոս եպս Հովհաննիսյանի, օծվեց Կարմիրգյուղ համայնքի Ս. Գրիգոր եկեղեցին:

Եկեղեցին հիմնանորոգվել է բարերարությամբ ծնունդով Կարմիրգյուղից Հովիկ Վարդանյանի, ով ներկայումս բնակվում է Ուկրաինայում: Եկեղեցու պահպանված հատվածների ապամոնտաժման եւ նորի կառուցման նախագծի հեղինակն է ՀՀ մշակույթի նախարարության Հուշարձանների պահպանության գործակալության աշխատակից Անդրանիկ Սարգսյանը:

Հավարտ օծման արարողության՝ գյուղի միջնակարգ դպրոցի եւ արվեստի կենտրոնի սաները ներկայացրեցին օրվա խորհրդին նվիրված հոգեւոր-մշակութային ծրագիր:

Արարողությանը ներկա էին մարզային եւ համայնքային իշխանությունների ներկայացուցիչներ եւ ՀՀ-ում Ուկրաինայի հյուպատոս Վալենտին Կուգիչկինը:

*Դիվան Գեղարքունյաց թեմի*

# ՎԵՐԱՕԾՎԵՑ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՇՐՋԱՆԻ ԲՈՒՂԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ՍԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻՆ



Օգոստոսի 8-ին, ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպս Միրզախանյանի, մասնակցությամբ Սամցխե-Ջավախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Բաբկեն աբղ. Սալբիյանի, Ախալքալաքի ու Արագովայի հոգեւոր հովիվ Սամվել քհն. Թորոսյանի եւ Թադեոս քհն. Տեր-Մկրտչյանի, վերաօծվեց Ախալքալաքի շրջանի Բուղաշեն գյուղի Սբ Հարություն եկեղեցին, որին հաջորդեց անդրանիկ պատարագի մատուցումը:

Այդ օրը բազմամարդ էր Բուղաշեն գյուղը: Ախալքալաքից, հարակից գյուղերից, Հայաստանից ժամանել էին բազմաթիվ հյուրեր՝ մասնակցելու Սբ Հարություն եկեղեցու վերաօծման արարողությանը:

Բուղաշենի ազգաբնակչությունը 1830-ին փոխադրվել է Կարնո գավառի Տանձուտ եւ Բռնակապան գյուղերից: Վերաբնակեցման տարիներին ժողովրդի միջոցներով գյուղում կառուցվում է քարաշեն, փայտածածկ եկեղեցի:

1860-ականներից գյուղում արդեն գործում է եկեղեցական ծխական դպրոց: 1899-ի դեկտեմբերի ահեղ երկրաշարժից տուժում է նաեւ եկեղեցին, սակայն 1909-ին ժողովրդի միջոցներով հիմնավորապես վերանորոգվում է եւ գործում մինչեւ 1930-ական թթ., ապա փակվում, վերածվում պահեստի, իսկ քահանան՝ աքսորվում:

Վերականգնումից 100 տարի անց բուղաշենցիներն ըմբոշխնեցին եկեղեցու վերանորոգման եւ վերաօծման հրաշալի արարողությունը: Եկեղեցին վերանորոգվել, եւ տարածքը բարեկարգվել է՝ նույն գյուղի ծնունդ, այժմ Ռուսաստանի Դաշնությունում բնակվող Խաչատուր Եղոյանի միջոցներով:

Առաջնորդ սրբազանը բարձր գնահատեց Եղոյան ընտանիքի աստվածահաճո գործը եւ պատգամեց վերականգնել կորցրած մեր եկեղեցական այն ավանդույթները, ծիսակարգը, որոնք խորհրդային տարիներին դադարել էին գործել:

Հանդիսավոր արարողությանը ներկա էին Ախալքալաքի շրջանային ժողովի նախագահ Խաչատուր Այվազյանը, շրջանային վարչության նախագահ Նաիրի Իրիցյանը, Վրաստանի Խորհրդարանի պատգամավոր Հարություն Հովհաննիսյանը, Վրաստանի Կառավարության տարածքային կառավարման նախարարի խորհրդական Համլետ Մովսիսյանը եւ պաշտոնական այլ անձինք:

Վերջում կատարվեց մատաղի ավանդական օրհնություն, եւ տոնական օրն ամփոփվեց ժողովրդական հանդիսությամբ:

*Վիրահայոց թեմի մամլո դիվան*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՍԱՐԳԻՍ Բ ԱՋԱՏԱՐ

## (1469/70-1474)

Արիստակեսին հաջորդեց Գրիգոր Ժ-ի երկրորդ աթոռակալ Սարգիս կաթողիկոսը, որն աթոռակցել է նաեւ նրան: Նրա մասին գործնականում տեղեկություններ չեն պահպանվել: Հայտնի չեն ո՛չ ծննդավայրը եւ ո՛չ էլ մականունը: Հայտնի է առավելապես Լուսավորչի Աջի գողությամբ, որի պատճառով էլ Մ. Օրմանյանը նրան պայմանականորեն կոչում է Աջատար: Միայն Աջի գողությունը բավարար է՝ նրան բացասաբար վերաբերվելու համար: Նրա գործունեությունը երկար ժամանակ խռովահույզ վիճակում պահեց Մայր Աթոռը: Հնարավոր է, որ նա հետագայում խիստ զղջացել է դրա համար, որը նրա մեծամիտ հավակնությունների արդյունքն էր: Իսկ այդժամ նա կամենում էր Լուսավորչի Աջը բերել Էջմիածին: Իր ծրագրերում որպես դաշնակից նա ունեցավ Վրթանես Օձնպեցուն կամ Ծահպոնեցուն, որը հմուտ ճարտասան էր եւ խարդավանքների վարպետ: Վերջինս Էջմիածնից հեռացավ՝ առանց գնալու վայրը հայտնելու: Այստեղ նա կերպարանափոխվեց՝ ներկայանալով որպես մաղդուսի: Որպես խեղճ աղոթարար եւ ուխտավոր՝ նա ներկայացավ Աղթամարի վանքը եւ անցավ ծառայության Աղթամարի կաթողիկոսարանում:



Վրթանեսը կամենում էր իմանալ Աջի պահվելու տեղը եւ գաղտնի կերպով այն վերցնել՝ Էջմիածնի համար: Նա կարողացավ դա անել միայն յոթ տարի անց, երբ Սարգիսն արդեն կենդանի չէր եւ չէր կարող ուրախանալ իր՝ այս անգամ եկեղեցանվեր ծրագրի իրագործումով:

Սարգիսը կաթողիկոս դարձավ առաջացած տարիքում՝ տկարացած առողջությամբ: Արիստակեսի ժամանակ նա միակ աթոռակիցն էր, քանի որ Արիստակեսը նոր աթոռակից ունենալու հարկը չտեսավ: Դառնալով կաթողիկոս՝ նա իրեն աթոռակից դարձրեց Հովհաննես եպիսկոպոսին, որի ընտրությունը, ըստ Դավրիժեցու, եղավ 1474 թվին: Սակայն հնարավոր է, որ այդ եղել է դրանից առաջ: Մ. Օրմանյանը Սարգսի միահեծան կաթողիկոսությունը դնում է 1470 թվին: Նրա գործունեությունը մնում է պատմական մշուշի մեջ, քանի որ հիշատակներ չեն պահպանվել: Նա մահացավ, ըստ Դավրիժեցու, 1476 թվին, եւ նրան հաջորդեց Հովհաննեսը: Սակայն Ճենովա քաղաքի արխիվի մի փաստաթուղթ հավաստում է, թե նա մահացել է 1474 թվին: Շատ հնարավոր է, որ առավելությունը պետք է տալ 1474 թվին: Այս օրերին խռովահույզ վիճակի մեջ էր Երուսաղեմի պատրիարքությունը: Պայքար էր մղվում տարբեր ազգերի քրիստոնյաների միջեւ, որից մեծապես օգտվում էին Եգիպտոսի սուլթանության իշխանությունները եւ, իհարկե, սուլթանները, որոնք մշտապես շահ էին փնտրում այդ խնդիրները կարգավորելիս:



Արդեն հիշվել է հայերի եւ վրացիների պայքարը Գողգոթայի սրբավայրերի համար, որը կարգավորելու նպատակով Եգիպտոս գնաց Մարտիրոս պատրիարքը, իսկ Եսայի աթոռակիցը, որ այդ ժամանակ Կոստանդնուպոլսում էր գտնվում, Երուսաղեմ վերադարձավ՝ միաբանությունը ղեկավարելու համար: Գողգոթան անցավ հայերի ձեռքը ոչ երկար ժամանակով: Վրաց թագավորը կրկին կարողացավ հաճեցնել Աբու-Սայիդ Չաքմաք սուլթանին, եւ այս անգամ Մարտիրոսը չկարողացավ դիմակայել վրացիների մեքենայություններին, թեպետեւ կրկին Եգիպտոս գնաց: Նա ստիպված եղավ հայերին վերադարձնել միայն Վերնատունը, որ այսօր էլ հայերի ձեռքին է: Սակայն վրացիների հրճվանքն էլ երկար չտեւեց: 1440-ին թագավորությունն ընկավ, եւ նրանց բաժինն անցավ դավանակից եւ համակրոն հույներին: Դրանով վրացիների անունը ջնջվեց Երուսաղեմի սուրբ վայրերում: Իսկ հայերից գրավված Գողգոթայի կեսն էլ ֆրանկները բռնությամբ վերցրեցին հույներից:

Բայց ոչ միայն քրիստոնյաներն էին իրար դեմ պայքարում, այլեւ մահմեդականները քրիստոնյաների դեմ սեփականության խնդիրներ էին հարուցում եւ անգամ եկեղեցիներ քանդում կամ մզկիթների վերածում: Պատճառաբանությունն իբր այն էր, թե դրանք նախկինում իսլամական աղոթատեղիներ են եղել: Այս առումով հիշատակության արժանի են Դավթի գերեզմանի գրավումը 1468-ին, Սբ Հարության տաճարի փակվելը քրիստոնյաների համար 1476-ին, ինչը Եթովպիայի թագավորի՝ 1480 թ. Երուսաղեմ այցելության կապակցությամբ վերացվեց: Հայերն էլ շատ նեղություններ կրեցին այս շրջանում եւ Սբ Հակոբի վանքի սեփականությունն ստիպված եղան պաշտպանել: Հարկ եղավ պայքարել սահմանված ապօրինի հարկերը վերացնելու համար: Եսային, որ Մարտիրոսի աթոռակիցն էր, շատ չանցած մահացավ, եւ մինչեւ Հովհաննես Թավիլը հինգ պատրիարք պաշտոնավարեց: Հարկ է նշել, որ Երուսաղեմում էլ աթոռակցության սովորությունը մուտք գործեց: Սակայն դա ինչ-որ տեղ արդարացված էր Երուսաղեմի համար, ուր սրբավայրերն անհատականության բնույթ ունեին պատրիարքների անունով: Իսլամական դատարանում աթոռակցի հայտնվելն ազատում էր սեփականությունը կորցնելու վտանգից, ինչը հնարավոր էր պատրիարքների անժառանգ մեռնելով:

*Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*
*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր*

## Հայորդյաց տների սաների այցը Ջավախք

Օգոստոսի 4-6-ը Ջավախք էին այցելել Մայր Աթոռ Սբ Էջմիածնի եւ ՀԲԸՄ Նորքի եւ Արաբկիրի հայորդյաց տների սաները՝ առաջնորդությամբ հոգեւոր տեսուչ-տնօրեն Կոմիտաս վրդ. Հովնանյանի: Խմբի ղեկավարության կազմում էին նաեւ հայորդյաց տների ուսումնական գծով փոխտնօրեն տիկին Աիդա Անդրեասյանը, Արաբկիրի հայորդյաց տան տնօրեն պրն Էդգար Հովհաննիսյանը եւ մի շարք մանկավարժներ:

Ախալքալաքի Սբ Խաչ եկեղեցու բակում իրենց հասակակիցներին դիմավորեցին առաջնորդական փոխանորդությանը կից գործող բակային ճամբարի սաները: Հայաստանից ժամանած հյուրերին բարի գալուստի խոսք հղեց Սամցխե-Ջավախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Բաբկեն աբղ. Սալբիյանը: Նա իր խոսքում կարեւորեց նմանատիպ այցերի շարունակականությունը՝ նշելով, որ Հայաստանից ժամանած հայորդիների ներկայությունը ոգեւորիչ եւ խրախուսական է ինչպես ջավախահայ իրենց հասակակիցների, այնպես էլ ողջ ջավախահայության համար: Այնուհետեւ ներկաները Սբ Խաչ եկեղեցու կամարների ներքո ընդհանրական աղոթք վերառաքեցին առ Աստված, որից հետո հոգեւոր զորակցության խոսքեր ուղղեց ներկաներին հայորդյաց տների հոգեւոր տեսուչ-տնօրեն Կոմիտաս վրդ. Հովնանյանը:

Արարողության ավարտին ներկաները եկեղեցու բակում միասնական կազմով երգեր երգեցին: Երեկոյան հայորդյաց տան սաները հյուրընկալվեցին Արագովա գյուղում եւ համերգային շուրջ 1,5 ժամանոց ծրագրով հանդես եկան գյուղի բնակիչների առջեւ: Հաջորդ օրը՝ առավոտյան, հյուրերն Արագովայի Սբ Գեւորգ եկեղեցու հոգեւոր հովիվ Թադեոս քհն. Տեր-Մկրտչյանի ուղեկցությամբ այցելեցին Վարձիա, որից հետո մասնակցեցին մատաղի արարողությանը: Վերադարձի ճանապարհին հայորդյաց տան սաները տեսան Թմկաբերդի եւ Խերթվիսի բերդերը: Երեկոյան՝ ժամը 6-ին, Ախալքալաքի քաղաքային այգում հայորդյաց տան սաների հրաշալի ելույթին ականատես դարձան բազմաթիվ ախալքալաքցիներ եւ շրջակա գյուղերի բնակիչներ:

Հաջորդ օրը հայորդյաց տների սաները, Ախալքալաքի հոգեւոր հովիվ Սամվել քհն. Թորոսյանի եւ Թադեոս քհն. Տեր-Մկրտչյանի ուղեկցությամբ, եղան Դիլիսկա գյուղում: Կեսօրին գյուղի եկեղեցու բակում հյուրերի մասնակցությամբ տեղի ունեցավ համերգ, որին ներկա էր գյուղի գրեթե ողջ բնակչությունը: Համերգի ավարտին հայորդյաց տան սաներին ողջույնի եւ երախտագիտության խոսքեր հղեցին գյուղապետ Անաստաս Քոսյանը եւ դպրոցի տնօրեն Ռիմա Մկոյանը: Վերջում գյուղի ղեկավարությունը դպրոցի շենքում հյուրասիրություն կազմակերպեց հայորդյաց տան սաների համար: Նույն օրը՝ երեկոյան, Ախալքալաքի քաղաքային այգում հյուրերին հրաժեշտ տվեց Բաբկեն աբղ. Սալբիյանը: Հայորդյաց տան սաները մեծ եռանդով եւ խանդավառությամբ առլեցուն վերադարձան Հայաստան՝ ջավախահայ իրենց հասակակիցների հետ Հայաստանում հանդիպելու ակնկալիքով:



*Սամցխե-Ջավախքի առաջնորդական փոխանորդության մամլո դիվան*

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԲԵՆԳԱԼԻԱՅԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՀԵՏ



Օգոստոսի 24-ին Հնդկահայոց հոգեւոր հովիվ եւ Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ Խորեն աբեղա Հովհաննիսյանը հանդիպեց Արեւմտյան Բենգալիայի նահանգապետ Գոպալկրիշնա Գանդիի հետ:

Հանդիպման ընթացքում հայր Խորենն անդրադարձավ հնդկահայ համայնքի արդի վիճակին եւ ճեմարանի առօրյային: «Հնդկաստանի Հանրապետությունն աշխարհի ամենամեծ ժողովրդավարական երկրներից է, եւ ահա Աստծո կամքով եւ օրհնությամբ այժմ ապրում եւ հոգեւոր ծառայությունս եմ բերում նման հարուստ եւ բազմերանգ մշակույթ ու լեզուներ ունեցող երկրում: Հնդկահայերը հպարտ են՝ լինելով նման հյուրընկալ պետության քաղաքացիներ, մշտապես վայելելով կառավարության բարեհաճությունը: Հնդկահայերը երախտապարտ են, որ պահպանում են իրենց ավանդույթները եւ ազատություն ունեն աղոթելու ու պաշտելու իրենց Աստծուն, ինչպես նաեւ դաստիարակելու եւ կրթություն տալու հայ աշակերտներին՝ Հայոց մարդասիրական ճեմարանում: Այս ամենի համար երախտապարտ ու շնորհակալ ենք Հնդկաստանի Հանրապետության հյուրընկալ եւ ժողովրդավար կառավարությանը»,- նշեց հայր սուրբն իր խոսքում:

Պատասխան խոսքում Բենգալիայի նահանգապետն այցելության համար շնորհակալություն հայտնեց հայր սուրբին եւ անդրադարձավ Հնդկաստանի եւ մասնավորապես Բենգալիայի կյանքում հայերի խաղացած մեծ դերակատարությանը: Նա իր հիացմունքն արտահայտեց Կալկաթայի 300-ամյա Սուրբ Նազարեթ հայոց եկեղեցու մասին՝ նշելով, որ վերջինս ավելի հին է, քան նահանգապետի պալատը: Տիար Գանդին նաեւ իր ուրախությունն արտահայտեց 188-ամյա Հայոց մարդասիրական ճեմարանի համար՝ քաղցրությամբ հիշելով ճեմարանի 185-ամյակին իր մասնակցության եւ ստացած վառ տպավորությունների մասին:

*ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ*

# ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 13-18-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

## (ընդհանուր ակնարկ)

*Սկիզբը՝ թիվ 14-15*

**Մխիթար Այրիվանեցին** ծնվել է Երեւանում: Նախապես նրա ծննդյան թվականն էր համարվում 1222-ը, որը ճշտվելով դարձել է 1230/1235: Այրիվանեցի է կոչվել այդ վանքի հոգեւորական լինելու համար: Ստույգ են նրա կյանքի եւ գործունեության հետեւյալ տվյալները՝ 1268-1271 թթ. եղել է վարդապետների ավագ, 1279-1286 թթ. արքեպիսկոպոսի աստիճանով եղել է Պռոշյան իշխանական տան հոգեւոր առաջնորդը: Այրիվանքում զբաղվել է մանկավարժությամբ՝ այն դարձնելով ուսումնական առաջնակարգ կենտրոն: Հռչակվել է որպես «անդրանիկ վարպետ», «րաբունի», «րաբունեաց րաբունի», «գերահռչակ րաբունի», «եռամեծ եւ բանիբուն վարդապետ»:

Պահպանվել է նրա ճգնախուցքարայրը՝ կառուցված 1289 թ. Գեղարդում, պահպանվել է նաեւ ճգնախցի արձանագրությունը:

Այրիվանեցին հայտնի է որպես շարականների, աղոթքների ու գանձերի հեղինակ, որոնք ժամանակին լայն տարածում են ունեցել: Առավել հայտնի են նրա հետեւյալ աշխատությունները՝ *«Նոր պատմութիւն», «Ստորագրութիւն պատմութեանն բազմերջանիկ սուրբ եւ փառաւորեալ հայրապետին Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի», «Վարք երանելւոյն Ալեքսիանոսի մարդոյն Աստուծոյ»*: Կազմել է *«Ճառընտիր», «Գանձարան»* ժողովածուները: Զբաղվել է նաեւ տոմարով, գրել մանկավարժական երկեր, նաեւ ճառեր ու քարոզներ:

*«Նոր պատմութիւն» («Պատմութիւն ժամանակագրական»)* երկը բնույթով ժամանակագրություն է եւ հասնում է մինչեւ 1289 թ.: Բաղկացած է երեք գլխից, որոնց նախորդում եւ հաջորդում են առաջաբանն ու վերջաբանը:

Սկիզբն աշխարհի աստվածային արարչությունն է: Շարունակությունը՝ առաջին մարդուց՝ Ադամից մինչեւ Աստծու Մարդը՝ Հիսուս Քրիստոսն ընկած ժամանակն է: Գրքի երրորդ մասն սկսվում է Փրկչի ծննդից եւ հասնում մինչեւ իր օրերը՝ 1289 թ.: Այսպիսի ընդգրկումով աշխատություն գրելու համար բնական է, որ հեղինակը պիտի քաջատեղյակ լիներ Աստվածաշունչ մատյանին, քրիստոնեական



հարուստ գրականությանը, հայ եւ օտար մատենագիրների երկերին:

Բուն մասը հայ ժողովրդի պատմության շարադրանքն է, որի մեջ Այրիվանեցին երեւում է որպես իր ժողովրդին նվիրված ճշմարիտ հայրենասեր: Ժամանակագրության ոճին հարազատ մնալով՝ Այրիվանեցին պատմությունը ներկայացնում է նաեւ գործիչների անվանական ցուցակներով, որոնց թիվը հասնում է 35-ի: Այստեղ ե՛ւ բուն Հայաստանն է, ե՛ւ Կիլիկիան, ե՛ւ անգամ Վրաստանն ու Աղվանքն են:

*«Ճառընտիր»*-ը (1283) միջնադարյան համալսարաններում ուսուցանվող հիմնական գրքերի ժողովածու է, որ կազմել ու գրչագրել է ինքը՝ Այրիվանքի վարդապետը: Ինչպես նշում է ուսումնասիրողը. «Սա առաջին եւ միակ ժողովածուն է, որտեղ ի մի են հավաքված ինքնուրույն եւ թարգմանական գրականություններից հայտնի 13 խոշոր հեղինակների 43 անուն աշխատություններ» (նույն տեղը, էջ 140): Այդ թվում՝ Փիլոն Եբրայեցի, Հերմես Եռամեծ, Արիստոտել, Դոնիսիոս Թրակացի, Դավիթ Անհաղթ, Պրոկղ Դիադորոս, Դիոնիսիոս Արիսպագացի, Գրիգոր Նյուսացի, Բարսեղ Կեսարացի, Եվագր Պոնտացի, Սեբերիանոս Եմեսացի եւ ուրիշներ: Այս գրքերին կցված են արժեքավոր հիշատակարաններ: Կան երկեր, որոնց տպագրությունն այստեղ բնագրի արժեք ունի: Այն նաեւ հայ թարգմանական գրականության գանձարան է:

Մխիթար Այրիվանեցու չափածո ժառանգությունը հոգեւոր բովանդակություն ու նշանակություն ունեցող գանձեր են եւ տաղեր: Բազմաթիվ են հեղինակի օգտագործած ծայրակապ ծածկագրերը: Այս երկերի միավորումով Այրիվանեցին ստեղծել է բանաստեղծությունների *«Գանձարան»* (1286): Ուշագրավ է, որ Գրիգոր Խլաթեցին հարյուր տարի անց (1387) Վասպուրականից հասել է Այրիվանք՝ ծանոթանալու Մխիթարի գանձերին: Խլաթեցին այդ գանձերն ընդօրինակել ու պահպանել է իր կազմած *«Գանձարան»*-ում: Այն բովանդակել է քանմեկ գանձ, երկու տաղ եւ մեկ հիշատակարան (տե՛ս նույն տեղը, էջ 162, նաեւ՝ «Գանձեր եւ տաղեր», որի մեջ ընդգրկված են 21 գանձ եւ 5 տաղ): Գանձերը նվիրված են Աստվածահայտնության ճրագալույցին, սուրբ թարգմանիչներ Սահակին եւ Մեսրոպին, Բարեկենդանին, Ծաղկազարդին, քրիստոնյա հայրերին, ճգնավորներին ու ինքնակալներին:

Սիրում է օգտագործել եռատող տներ, որոնք խորհրդանշում են սուրբ երրորդությունը, ինչպես նաեւ կարճ տողեր եւ հանգ ու հանգիտություն: Ազգային, քրիստոնեական, ընդհանուր մարդկային գաղափարներ արծարծելով՝ նա մշտապես նույն բաղձանքն ունի.

*Տալ խաղաղութիւն*
*Լիութիւն հացին,*
*Երկրիս երկնային Աճումն*
*անասնին,*
*Եւ սէր մարդկային, Յավելում*
*սիրին...* (նույն տեղը, էջ 190):

Գանձերն ունեն յուրահատուկ կառուցվածք: Յուրաքանչյուր գանձ բաղկացած է 10 տնից: Տների առաջին տողերի առաջին տառերով ստեղծվում է մեկը մյուսին շարունակող ծայրակապ: Այսինքն՝ ձեւավորվում է շղթա: Ըստ այդմ՝ 16 գանձերի ծայրակապով ստեղծվում է հետեւյալ իմաստային շարքը՝ «Տէր Մխիթարա + վարդապետի+ բայիւ երգել+ հնգետասան+ վեշտասանք է+ բան քարոզից+ Այրիվանեցի+ Երեւանեցին+ հայցէ սիրով+ զպակասորդի+ տէրունական+ վկայականաց+ տաւնից ասել +խորհըրդոցն+ի փառս տեառն+Սարգիս գրիչ»: Մյուս գանձերը՝ «Կիրակէ», «Ճգնավորք», «Տէր Մխիթարա», Տ(էր) Մխիթար վ[արդապետ], «Մերզա»: Տների հաջորդականությամբ ծայրակապն առկա է նաեւ տաղերի մեջ՝ «Մխիթար» (երկու տաղում) եւ հայոց այբուբենը՝ տողերի հաջորդականությամբ:

Գանձերի յուրաքանչյուր տուն բաղկացած է 12 տողից, կան տատանումներ (11,13), ինչը, ամենայն հավանականությամբ, տողատման անճշտության կամ հավելատողերի հետեւանք է, քանի որ 12 թիվը որոշակիորեն խորհրդանշում է 12 առաքյալներին: Գանձերի տողերը բաղկացած են 15 վանկանի եռանդամ բարդ ոտքից՝ 15=5+5+5: Այս եռանդամ (եռամաս) բաժանումն իր հերթին 3 թվի խորհրդանշանն է: Մեկ այլ առանձնահատկություն եւս՝ յուրաքանչյուր տան առաջին տողը երեք անգամ շեշտում է ծայրակապի տառը՝

*Տարփումն ըղձական տոչոր*
*անձկական տոհմից բանական:*
*Էդ անեղ, անծին, Էդ Հաւր*
*ծոցածին, Էդ լոյսդ անքըննին:*
*Րամից հրեղինաց, րամկական*
*զաւրաց, րախճան բանակաց:*

12-13-րդ դարերում է ապրել եւ ստեղծագործել նաեւ **Դավիթ Քոբայրեցին**: 1204, 1206 թթ. մասնակցել է Լոռիի եւ Անիի եկեղեցական ժողովներին: Գրել է մեկնություններ, ճառեր, ներբողներ:

Ժամանակի նշանավոր դեմքերից է **Թովմա Մեծոփեցին** (1378-1446): Ծնվել է Արճեշի Աղի գյուղում, մահացել է քարոզի ժամանակ Մասյացոտն գավառի Ակոռի գյուղում: Մեծոփեցի կոչվել է Քաջբերունիքի Մեծոփ գյուղում ապրելու համար: Մեծոփի, Խառաբաստի վանքերում կրթվելուց հետո՝ 1406-ից, ուսումը շարունակել է Տաթեւի համալսարանում՝ աշակերտելով Գրիգոր Տաթեւացուն: 1410-ից Մեծոփի վանքի վանահայրն էր եւ վարդապետը: Զբաղվել է մանկավարժությամբ, ուսուցանել է գրչության արվեստ: Նրա կյանքին եւ գործունեությանն է նվիրված Գ. Հովսեփյանի *«Թովմա Մեծոփեցու կյանքը»* (Վաղարշապատ, 1914) գիրքը:

*Շարունակությունը՝ էջ 7*

# Ուխտագնացություն Արագածոտնի թեմի սրբավայրեր



Օգոստոսի 13-ին Արագածոտնի թեմի առաջնորդարանը թեմի առաջնորդական տեղապահ Գրիգոր աբեղա Խաչատրյանի եւ Թալինի Սբ Աստվածածին եկեղեցու համայնքի հոգեւոր հովիվ Ղեւոնդ ավ. քհն. Գափոյանի օրհնությամբ եւ առաջնորդությամբ կազմակերպել էր ուխտագնացություն:

Թալինի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Նվարդ Ամիրխանյանի նախաձեռնությամբ՝ շրջանի միջնակարգ եւ ութամյա դպրոցների Հայ Առաքելական Եկեղեցու պատմության ուսուցիչները եւ ուխտավորները վաղ առավոտյան ժողովվեցին եկեղեցու բակում, ապա կատարվեց գիշերային ժամերգություն: Ուխտյալ հայորդիներն առավոտյան իրենց աղոթքը բարձրացրին առ Աստված՝ խաղաղ ուղեւորության, եկեղեցու պայծառության եւ հայ ժողովրդի բարօրության համար: Ուխտագնացությանը մասնակցում էր նաեւ Մաստարայի Սբ Հովհաննես եկեղեցու հոգեւոր տեսուչ Սեյրան դպիր Գալստյանը: Առաջին հերթին այցելեցին Օշականի Սբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցի: Որտեղ կրկին ընդհանրական աղոթք կատարեցին ողջ հայության եւ իրենց՝ ուխտավորների հավատի անսասանության համար: Ուղեւորության հաջորդ վայրը Մուղնու Սբ Գեւորգ եկեղեցին էր: Այստեղ ստանալով Եղիշե ավ. քհն. Բարսեղյանի օրհնությունը, շրջեցին մոտակա մի քանի վանքերում, եղան նախ՝ Սբ Մարինե եկեղեցում, ուր Մկրտիչ ավ. քհն. Երանյանն ուխտավորներին հանգամանորեն ներկայացրեց սբ Մարինեի պատմությունը: Ապա մեկնեցին Կարպի գյուղի Սբ Աստվածածին եկեղեցին, որի բակում գտնվում էր մի գեղեցիկ հուշահամալիր՝ նվիրված 2-րդ աշխարհամարտի զոհերի հիշատակին:

Հաջորդ հանգրվանն Օհանավանքն էր:

Ուղեւորությունն Օհանավանք հետաքրքիր էր, քանզի ողջ ճանապարհին կատարվում էին հոգեւոր երգեր եւ շարականներ, իսկ վանքի խաղաղությունը խախտվեց տեր Ղեւոնդի աստվածատուր ձայնով՝ «Հավուն, հավուն»-ի կատարմամբ: Եկեղեցում, կարծես, կրկին լսվեց հրեշտակների երգակցությունը, երբ եկեղեցու երգչախմբի կատարմամբ հնչեցին կոմիտասյան «Սուրբ, սուրբը», «Ամեն հայր սուրբը» եւ «Տեր ողորմյան», որ հնչում էին գրեթե բոլոր ուխտավայրերում: Օհանավանի եկեղեցով զմայլված եւ վանքի հետնամասից բացվող բնության հրաշալի տեսարաններով՝ խոր ձորերով եւ գահավեժ ջրվեժներով հիացած՝ հավատացյալ ուխտավորները մեկնեցին մոտակա լեռան գագաթին վեհաշուք բազմած Սաղմոսավանք, ուր, թվում էր, երկինքն ու երկիրը հատվում են միմյանց: Սաղմոսավանքում եւս հնչեցին հոգեհույզ շարականներ: Իսկ մանրաքանդակ խաչքարերը, որոնք եկեղեցու գավիթում պատնդուս կանգնած էին, իրենց քարե համանվագով լրացրին եկեղեցում հնչող երաժշտությունը:

Սաղմոսավանքում տեր Ղեւոնդը մանրամասնեց եկեղեցու շինության պատմությունը՝ համեմելով եկեղեցու սրբազան ավանդությունից բերված բազմաթիվ դրվագներով. ի դեպ՝ նա իր առաջին հնգամյա հոգեւոր եւ եկեղեցաշեն գործունեությունն այնտեղ էր ծավալել: Ուխտագնացության վերջին վայրը Սբ Աստվածածին մատուռ-եկեղեցին էր, որտեղ մատուցվեց ավանդական մատաղ, իսկ հենց բակում անցկացվեց գեղարվեստական միջոցառում: Ապա ուխտավորները հասկավորվող արտերի մեջ բացվող արահետով շարժվեցին դեպի մոտակա սարի վրա գտնվող Աստվածընկալի Սբ Նշան վանքը, որտեղ կատարվում էին գավիթի եւ կից եկեղեցու վերականգնման աշխատանքները: Ընդհանրական աղոթքից եւ երկրպագությունից հետո երանավետ երջանկությամբ եւ բազմախորհուրդ շարականների օրհնությամբ ուխտավորներն ավարտեցին ուխտագնացությունը:

***Դավիթ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***
***Գեւորգյան հոգեւոր ճեմարանի***
***Բ լսարանի սան***



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԼԵՎՈՆ ՇԱՆԹԻ



*Սկիզբը՝ թիվ 11-15*

Նորագույն ժամանակներում չկայի՞ն արդյոք զոհաբերվելու պատրաստակամ հայ գործիչներ: Կային, եւ շատերը կային՝ կամավոր հայ զինվորից սկսած մինչեւ բարձրագույն հրամանատարություն, որոնք յուրովի դժբախտ էին՝ այդ հանգամանքներում ու ժամանակներում հայտնվելով: Հաճախ անտեսելով ուժերի հարաբերակցությունը՝ մենք ինքներս ենք դատապարտում մեզ՝ այդ իրավիճակում հայտնված ազնիվ հայ բոլշեւիկներին, հայ դաշնակցականներին եւ սրանց հարաբերակից այլեւայլ կուսակցություններին: Սակայն մի ճշմարտություն ակնհայտ է. մենք չենք կարողացել թշնամական գերակշիռ ուժերի դեմ միասնական ճակատ կազմել, ինչպես դա արեցինք 1918-ի մայիսին Սարդարապատում, Ապարանում ու Ղարաքիլիսայում եւ 1919-1921 թթ.՝ Լեռնահայաստան-Զանգեզուրում: Եթե մեզ այդպես դրսեւորեինք Վանի հերոսամարտում, ուր միածույլ վանեցիք միայնակ հաղթանակ տարան թրքական կանոնավոր բանակների դեմ եւ դեռ ավելի քան երկու ամիս տեւած անկախություն հռչակեցին ու միայն ռուսական վերին հրամանով Վան-Վասպուրականը զիջեցին թուրքերին: Իսկ Նախիջեւանի հարցում Հայհեղկոմն ընտրել էր թույլ դիմադրության ճանապարհը, նույնիսկ Նախիջեւանը հանձնելու փաստաթուղթը ստորագրելիս չի պաշտպանել սոսկալի ջարդերից ու բռնի տեղահանություններից հետո տեղում մնացած շուրջ 40 տոկոս հայ ազգաբնակչության պատմական, ազգային ու մարդկային իրավունքները: Կային հայրենասեր ուժեր, որ, դիմադրելով արտաքին թշնամու եւ ներքին խռովարարների ոտնձգություններին, կարողացան պահպանել Հայաստանի Հանրապետությունն ու Լեռնահայաստանը: Նույնիսկ այսպիսի համոզվածության դեպքում էլի առկախ կմնա ճակատագրական հիմնահարցը. մեր հայրենասեր ուժերով կկարողանայի՞նք պաշտպանել Հայաստանի Առաջին Հանրապետությունը, չէ՞ որ Օշին պայլն ու մյուս հայրենասեր ուժե-

## «ԻՆԿԱԾ ԲԵՐԴԻ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ» ԵՎ «ՕՇԻՆ ՊԱՅԼ» ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

րը ժամանակին չկարողացան պաշտպանել Կիլիկիան: Այս հարցադրումներով ու մտորումներով էր Լ. Շանթն ստեղծում իր վերջին թատերակը:

Թագավորահայր Օշինը Կիլիկիայի երեքհարյուրամյա փորձով համոզվել էր, որ եսասիրությունն ու օտարամոլությունը կարող են կործանարար լինել մեծ զոհողություններով ստեղծված ու թշնամական շրջապատման մեջ հայտնված պետականության համար: Ահա ինչու նա գիտակցում էր Ամռիների վտանգավորությունը եւ ռազմական ատյանով մահվան վճիռ էր հրապարակել Կիպրոսի երբեմնի թագուհի Զաբելի ու նրա երկու որդիների համար, իսկ Ժուան Ամռուն, որ արդեն Ռիտայի ամուսինն էր, տվել էր երկրից հեռանալու երեքօրյա ժամկետ: Վճիռը բեկանելու եւ հաշտություն կայացնելու եկած միջնորդներին Օշին պայլը վճռաբար պատասխանում է.

«ՕՇԻՆ - Կա՛րճ, ամեն դիմադրություն պիտի վերջ գտնե, եւ ամեն գլուխ պիտի խոնարհի թագավորի հրամանին առջեւ: Այս թագավորությունը պետք է բարձրանա. հարգանք ու պատկառանք պիտի ազդե շուրջի թշնամիներուն. ատոր վրա են աշխատեր երեք դար բոլոր հայ իշխաններն ու թագավորները: Ես ալ ատոր համար եմ հոս» (նույն տեղում, էջ 731):

Իսկ եվրոպական գործիչները երկակի խաղ են խաղում. նրանք մի կողմից հրաշալի գիտեն, որ քրիստոնյա հայերն են իրենց միակ հուսալի պաշտպանը Արեւելքում իսլամական հարձակումների դեմ, բայց մյուս կողմից ջանում են իրենց ենթարկել Հայոց Եկեղեցին ու պետականությունը: Մոնսինյորը Շապն էլ ա՛յդ գերագույն նպատակով է Կիլիկիայում.

«ՆՎԻՐԱԿԸ - Հայ եկեղեցիին վերջնական միացումը... Տարին չբոլորած Կիլիկիայի թագավորությունն ալ պետք է ըլլա զուտ կաթոլիկ եւ մեր առաքելական աթոռին հրամաններուն ներքեւ» (նույն տեղում, էջ 743):

Սա ոչ այլ ինչ է, եթե ոչ բոլշեւիկների՝ Հայաստանը խորհրդայնացնելու եւ համաշխարհային հեղափոխության քարոզչության միջնադարյան տարբերակը: Չենք բացառում, որ Լ. Շանթն այս պայմանական անունների տակ նկատի է ունեցել Հայաստանի հետ վերջնագրի լեզվով խոսող նորագույն ժամանակների որոշակի բոլշեւիկ գործիչների, որոնց նախատիպերի հարցադրումներին Օշին պայլն ուներ միանշանակ ու հստակ երկու փոխշաղկապված պատասխան.

1. եթե Նվիրակը եկել է Հռոմի սրբազան պապի եւ Կիլիկիայի հայոց պետության միջեւ բարեկամական կապ դառնալու, ապա թող բարի լինի գրել, համոզել իր վերադասին, որ մեր «ազգային զգացմունքներուն դեմ բաներ չմտածեն, որ հայ շունչին եւ հայ հակումներուն ձեռք չի դպցնեն»: Իսկ եթե շարունակեն իրենց քաղաքականությամբ քանդել եւ ավերել մեր հայաշունչ ու հայադրոշմ աշխարհը, դրանից իրենք ոչինչ չեն շահի, քրիստոնեությանն էլ օգուտ չեն տա.

2. եթե ուզում են, որ հայոց պետությունը ամուր պատնեշ եւ հզոր պատվար դառնա մահմեդականության դեմ, ապա «մի՛ հանեք երբեք այս երկրին իշխանները իրենց թագավորին դեմ, եթե նույնիսկ այդ իշխանին անունը Օշին պայլ ըլլա»:

Նա Գող Վասիլի նման երբեք պատկանելություն արտահայտող դերանուններ ու ստացական հոդեր չի գործածում, ընդհակառակը, ստեղծված պայմաններում Օշինն իր պետական մտածողությամբ, ազգային ազնիվ ռոմանտիկ ծրագրերով կարո՞ղ էր հաջողության հասնել, երբ հայոց արքունիքում անվրեպ գործում էր մշտաժպիտ քծնողների, թաքուն դավադիրների ու լրտեսների հսկա մի բանակ, գործում էր հայոց պետության դեմ՝ աջակից ունենալով նաեւ Օշինի խնամակալությունից դժգոհ եւ ինքնուրույնության ձգտող անչափահաս թագավորի մանկամտությունը: Անգամ դավադիր պապի նվիրակն է տեսնում եւ առերես գնահատում է Օշինի գործունեության պտուղները.

«ՆՎԻՐԱԿԸ - Պատահականություն մը չէ, որ հիմա քու ձեռքդ կգտնվի այս երկրին ղեկը: Աստվածային պարգեւ մըն է ասիկա, որ շնորհվեր է մեզի քրիստոնեական այս բերդի ամրացմանը համար: Ամենեն առաջ պետք էր ուժեղ մարդ մը: Ահա տարիների աշխատանքով հասել ես նպատակիդ մեկ մեծ ու խոշոր մասին. ահա՛ հետ են նետված մամլուքները, Ահա՛ Իկոնիան տեղեն երերալ չի համարձակվիր. ներսն ալ ընկճեր ես բոլոր հակառակորդներդ եւ լավ ես ըրեր: Դու ես տերը այսօր հաստատ ու անվիճելի, ուրա՛խ եմ. բայց վա՞ղը» (նույն տեղում, էջ 749):

Իսկ վաղը Օշինի փոխարեն հայոց գահին բազմած էր լինելու իրոք անփորձ եւ անուժ մի քսանամյա մանկամիտ, որը, լինելով ազդեցությունների ենթակա, քաղաքական բարդ իրադրության մեջ ճիշտ չկողմնորոշվելով, ոչնչացնելու է Օշինի եւ մյուս նախորդների ամբողջ ստեղծածը: Բայց այս միտքը Օշինի երեսին ասում է դրսեկ մի դրածո, որը մաքառում էր հենց այդ նպատակի իրագործման համար: Այդպես էին իրենց դրսեւորում նաեւ պարոն Բոհեմունդը, երակներում ֆրանկի արյուն հոսող, ճկուն մեջք ու ճկուն լեզու ունեցող Հալկամ իշխանը, որին Օշինն ինքն էր կարգել երիտասարդ արքայի ռազմական ուսուցիչ, անգամ հավատարիմ թվացող գործավարն է հայտնվում դավադիրների մեջ:

*Շարունակությունը՝ էջ 6*

**Իլարիոն եպս. ԱԼՖԵԵՎ**

# Եկեղեցի

## ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

XX դ. սկզբում արք. Իլարիոն Տրոիցկին՝ ռուսական նոր վկաներից մեկը, գրում է. «Առանց Եկեղեցու չկա քրիստոնեություն»: Եկեղեցին Քրիստոսի արքայությունն է՝ Նրա իսկ արյամբ գնված: Արքայություն, ուր Նա տանում է նրան, ում Նա է ընտրել՝ որպես Իր զավակի, եւ նրան, ով ընտրել է Իրեն՝ որպես իր Հորը:

Եկեղեցու գոյության սկիզբը երկրի վրա համարվում է Փիլիպյան Կեսարիայում Հիսուս Քրիստոսի զրույցն Իր աշակերտների հետ, երբ Պետրոսը բոլոր առաքյալների անունից Նրան Աստծո Որդի խոստովանեց, որին էլ ի պատասխան Փրկիչն ասաց: *«Երանի է քեզ, Սիմոն, Հովնանի՛ որդի, որովհետեւ մարմինը եւ արյունը չէ, որ հայտնեց քեզ, այլ՝ իմ Հայրը, որ երկնքում է: Եվ ես քեզ ասում եմ, որ դու վեմ ես, եւ այդ վեմի վրա պիտի շինեմ իմ Եկեղեցին, ու դժոխքի դռները այն չպիտի հաղթահարեն»* (Մատթ. ԺԶ 17-18): Այսինքն՝ Պետրոսի խոստովանությունը դարձավ Քրիստոսի Եկեղեցու հիմնարար վեմը:

Սակայն, ըստ էության, Եկեղեցու բուն անկյունաքարը հենց Ինքը՝ Քրիստոսն է: Պետրոս առաքյալն իր թղթում Քրիստոսի մասին խոսում է իբրեւ Եկեղեցու անկյունաքարի. *«Մոտեցե՛ք նրան՝ կենդանի վեմին, որը, թեպետ մարդկանցից անարգված, բայց Աստծո առաջ ընտրյալ եւ թանկագին է: Եվ դուք, իբրեւ կենդանի վեմեր, կառուցվում եք, որպես հոգեւոր տաճար, որպես անարատ քահանայություն, որպեսզի Հիսուս Քրիստոսի միջոցով մատուցեք հոգեւոր պատարագներ, որոնք հաճելի լինեն Աստծուն. քանզի Գրքում էլ կա, թե՝ «Ահավասիկ ընտիր վեմ եմ դնում Սիոնի մեջ, թանկագին անկյունաքար. եւ ով նրան հավատա, ամոթով չպիտի մնա»* (Ա Պետ. Բ 4-6): Այսպիսով՝ Քրիստոսի հանդեպ հավատը վեմ է՝ հիմքը հոգեւոր այն կառույցի, որի անունն է Եկեղեցի: Այս մասին խոսում է նաեւ Պողոս առաքյալը. *«Ապա ուրեմն, օտար եւ պանդուխտ չեք, այլ՝ համաքաղաքացի սրբերին եւ ընտանի՝ Աստծուն, կառուցված առաքյալների եւ մարգարեների հիմքի վրա, որի անկյունաքարը Քրիստոս Հիսուսն է: Նրա վրա ներդաշնակությամբ հաստատված ամբողջ կառույցը Տիրոջով վերաճում է մի սուրբ տաճարի, որի մեջ դուք էլ Նրա հետ կառուցվում եք որպես բնակարան Աստծո՝ Սուրբ Հոգու միջոցով»* (Եփ. Բ 19-22): Կորնթացիներին ուղղված թղթում Պողոս առաքյալը Կորնթոսի համայնքն անվանում է «կառույց», իրեն՝ «կառուցող», իսկ Քրիստոսին՝ «հիմնաքար» (հիմք), *«որովհետեւ ոչ ոք չի կարող դնել ուրիշ հիմք, քան դրված այն հիմքը, որ Հիսուս Քրիստոսն է»* (Ա Կորնթ. Գ 11):

Հունարեն *ekklesia* բառը, որ նշանակում է «եկեղեցի», «մարդկանց ժողով», ծագել է *ekkaleo* «կանչել» բայից: Քրիստոնեական Եկեղեցին Քրիստոսի կողմից կանչվածների, Նրան հավատացողների եւ Նրանով ապրողների ժողովն է: Սակայն Եկեղեցին լոկ Քրիստոսի հանդեպ հավատով միավորված մարդկանց հանրություն չէ, համագործակցություն, ոչ էլ անհատների հանրագումար: Եկեղեցու՝ ի մի եկած անդամները կազմում են մեկ միասնական մարմին, անքակտելի մի օրգանիզմ: Վլադիմիր Սոլովյովը գրում է. «Իր աստվածային էությամբ Քրիստոսով վերամիավորված մարդկությունը Եկեղեցին է՝ աստվածային Բանի կենդանի մարմինը՝ մարմնավորված աստվածամարդ Հիսուս Քրիստոսի անձի (էության) մեջ: Այն Քրիստոսի մարմինն է, որը սկզբում մանր սերմնահատիկի պես հայտնվեց առաջին քրիստոնյաների փոքրաթիվ համայնքի տեսքով, ապա կամաց-կամաց աճեց ու զարգացավ, որպեսզի ժամանակների լրումին իրենով ընդգրկի ե՛ւ համայն մարդկությունը, ե՛ւ ողջ բնությունը տիեզերական աստվածամարդկային մեկ օրգանիզմի մեջ»:

Եկեղեցու՝ Քրիստոսի Մարմին անվանումը պատկանում է Պողոս առաքյալին. *«... մե՛կ Հոգով մե՛կ մարմին լինելու համար մկրտվեցինք մենք ամենքս՝ թե՛ հրեաներ, թե՛ հեթանոսներ, թե՛ ծառաներ, թե՛ ազատներ. եւ բոլորս էլ այդ*



*մե՛կ Հոգին խմեցինք...Արդ, դուք մարմինն եք Քրիստոսի եւ անդամներ՝ նրա անդամներից»* (Ա Կորնթ. ԺԲ 13, 27): Խորհուրդների, հատկապես՝ Հաղորդության հացի եւ գինու ճաշակմամբ հաղորդ լինելով Քրիստոսի Մարմնին եւ Արյանը՝ մենք միավորվում ենք Նրա հետ եւ Նրա հետ դառնում մեկ մարմին. *«Մի հաց, մի մարմին ենք բոլորս, քանի որ բոլորս էլ այդ միակ հացից ենք վայելում»* (Ա Կորնթ.Ժ 17): Եկեղեցին Քրիստոսի հաղորդական մարմինն է. հաղորդությունը միավորում է մեզ ե՛ւ Նրա, ե՛ւ միմյանց հետ: Եվ որքան մոտ ենք մենք Աստծուն, այնքան մոտ ենք միմյանց, որքան լիարժեք է մեր սերը Քրիստոսի հանդեպ, այնքան ուժգին է այն մերձավորի նկատմամբ: Խորհուրդների միջով վերանցնող մեր կյանքով, երբ վերամիավորվում ենք Աստծո հետ, մենք վերամիավորվում ենք միմյանց հետ, հաղթահարում մեր սովորական մեկուսությունն ու օտարացումը, դառնում մեկ անբաժանելի օրգանիզմի այն անդամները, որոնք միմյանց հետ կապված են սիրո միությամբ:

Եկեղեցու հինկտակարանյան նախատիպը Աստծո ընտրյալ եւ մյուս ազգերից առանձնացող Իսրայելի ժողովուրդն էր: Հին Իսրայելին պատկանելու նշաններն ազգությունն էր ու թլփատությունը, իսկ Նոր Իսրայելին՝ Եկեղեցուն՝ հավատն առ Քրիստոսն ու մկրտությունը: Հին Իսրայելը մի բանակ էր, որին գլխավորում էր Աստված-Առաջնորդը, իսկ նոր Իսրայելն այն հոտն է, որին հովվում է Քրիստոսը (տե՛ս Ա Պետ. Ե 1-2): Հին Իսրայելը դեգերում էր անապատում՝ ավետյաց երկրի սպասումով, Նոր Իսրայելը դեգերում է ավետյաց երկրում՝ սպասումով ու ակնկալությամբ Երկնային Արքայության, որը կատարելապես ի հայտ կգա «աշխարհի վախճանից» հետո, այսինքն՝ գալիք կյանքում, որը, սակայն, Եկեղեցու մարդկանց համար արդեն իսկ սկսված է:

*Շարունակելի*

***Թարգմ.՝ միանձնուհի Տաթեւիկ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ***

# ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԽՃԱՆԿԱՐ

Բոլոր բռնապետ-միապետներին նվիրված դամբարաններ են կառուցել (կամ ցանկացել են կառուցել): Եվ որքան ահեղ ու բիրտ է եղել միապետը, այնքան մեծ ու նշանակալից է դամբարանը: Դամբարաններ կառուցել են նաեւ հին եգիպտացիները՝ Ք. ա. 2800-2700 թթ.: Դրանք խորհրդանշում են «երկրային աստված» դարձած միահեծան փարավոնի անսահման իշխանության կայունությունն ու հավերժությունը: Բայց ինչո՞ւ հենց հսկայածավալ ու պարզունակ բուրգերի տեսքով: Որովհետեւ երկրաչափական ձեւույթ ունեցող մարմիններից այդ գաղափարների ամենահուսալի եւ ամենակնառու կրողը, ինչպես նկատել է դեռեւս Էվկլիդեսը, քառանիստ բուրգն է. նրա ծանրության կենտրոնն է, իրոք, ամենացետնաքարշը, առավել եւս, որ ներքուստ ողջ ծավալով գրեթե հոծ է: Բուրգը նաեւ պարզագույն միջոցներով՝ հավերժությանը միտված, բարձր արտահայտչականության ու կատարելության լավագույն օրինակ է: Հիշո՞ւմ եք հնուց եկող առածը. «Աշխարհում ամեն ինչ վախենում է ժամանակից, իսկ ժամանակը վախենում է բուրգերից»: Դրա համար է, որ որպես փարավոնների հավերժության կացարան են ընտրվել բրգաձեւ կառույցները:

Երբ տարածվեց մետաղե ցանցկեն Էյֆելյան աշտարակի կառուցման լուրը, Ֆրանսիայում մեծ աղմուկ բարձրացավ: Մտավորականները դիմեցին կառավարությանը՝ աշտարակի կառուցումը կասեցնելու, այն «որպես սարսափ՝ Փարիզի լուսավոր կերպարի վրա չծանրացնելու» խնդրանքով: Հատկապես ակտիվ էին գրողներ Էմիլ Զոլան, Գի դը Մոպասանը, Պոլ Վեռլենը: Այնուամենայնիվ 1889-ին կառուցվեց աշտարակը՝ 306 մ բարձրությամբ: Մերկ մետաղն առաջին անգամ հանդես եկավ որպես ճարտարապետական կառույց, որպես XIX դ. տեխնիկայի նվաճումների խորհրդանիշ: Աշտարակը դարձավ փարիզեցիների եւ Փարիզի հյուրերի մշտական այցելավայրը: Ամենօրյա այցելուների թվում էին նաեւ Զոլան, Մոպասանը, Վեռլենը, ինչը զարմացնում էր նրանց ճանչողներին. չէ՞ որ այնպես կրքոտ պայքարում էին աշտարակի կառուցման դեմ: Երբ հարցնում են այդ մասին, նրանք պատասխանում են, որ միայն աշտարակի վրայից չի երեւում «այդ մետաղե հրեշը»:

Էյֆելյան աշտարակի հեղինակը՝ շինարար ինժեներ Գյուստավ Էյֆելը (1832-1923 թթ.), չնայած համաշխարհային ճանաչում ունեցող շատ գործերի հեղինակ էր, կյանքի վերջին տարիներին լքված ու մոռացված, կենսական հոգսերով ապրող մեկն էր: Նա էլ էր հաճախ լինում աշտարակի վրա, նստում մի անկյունում, անթարթ նայում եկող-դարձողներին: Մարդիկ անտարբեր անցնում էին մոտով՝ անգիտենալով, որ հնամաշ հագուստով այդ խորշոմած ծերունին հանճարեղ կառույցի հեղինակն է: Էյֆելի շրջապատի մարդիկ փոխանցել են սերունդներին, որ նա հաճախ էր կրկնում. «Ես նախանձում եմ աշտարակին»:

Շատ քիչ բան է հայտնի մեր հոյակապ ճարտարապետական կառույցներն արարող աշխատավոր մարդկանց մասին: Քչերի անուններն են ավանդվել, մեր ժամանակները հասել: Դրանք էլ հիմնականում կառույցի ճարտարապետներն են, վարպետաց վարպետները, որոնք աչքի չընկնող տեղերում, առանձին, մեկուսի փորագրված իրենց անուններով ու նշանագրերով խնդրում են սերունդներին. «Զվարդպետս.... յիշեցէք»: Ասում են, թե աշխատավոր մարդուն վերաբերող՝ հնագույն ամենաժողովրդական բնույթի արձանագրությունը Գառնիի ամրոցի բաղնիքի խճանկարի հյուսածո շրջանակի վերեւում հունարեն գրվածն է. «Աշխատեցինք՝ ոչինչ չստանալով»: Բայց դա միակը չէ, նման բնույթի մի ուրիշը եւս կա՝ փորագրված Հառիճավանքի Սբ Աստվածածին եկեղեցու (1201 թ.) արեւելյան ճակատին. «Աստուած, ողորմեա աշխատաւորաց, Ամեն»: Աշխատավորների անունները չեն հիշատակել, սակայն նրանց մասին մտածել են:

Սանահինի եւ Հաղպատի վանքերի գլխավոր եկեղեցիները՝ Ամենափրկիչը եւ Սբ Նշանը, կառուցել է Բագրատունյաց Աշոտ Գ Ողորմած թագավորի (953-977 թթ.) կին Խոսրովանույշ թագուհին՝ 966 եւ 976-991 թվականներին՝ հանուն իր որդիների՝ Սմբատի եւ Կյուրիկեի արեւշատության: Երկու եկեղեցիների արեւելյան ճակատին փորագրված են այդ թագավոր-եղբայրների մոնումենտալ ձեւերով եւ շեշտված ծավալներով կտիտորական բարձրաքանդակները՝ եկեղեցու մանրակերտը ձեռքներին: Եկեղեցիները կարուցել է մայրը՝ Խոսրովանույշ թագուհին, բայց պատերին պատկերել է տվել իր զավակներին՝ «մոռանալով» սեփական անձը եւ կանացիական փառքը:

Սյունյաց Սոփիա իշխանուհին, 936 թ. կառուցելով Գնդեվանքի եկեղեցին, թողել է այսպիսի պատկերավոր ու արտակարգ բովանդակությամբ արձանագրություն. «Մատանի էր անակն Վայոց ձոր, շինեցի զսա եւ եդի ակն ի վերայ»: Արձանագրությունը պահպանվել է ոչ ամբողջական ձեւով (մնացել են միայն սկզբի եւ վերջի մասերը): Բարեբախտաբար այն ընդօրինակել է եւ իր «Սյունիքի պատմության» մեջ ներկայացրել XIII դ. պատմիչ Ստեփանոս Օրբելյանը: Ուշագրավ է նաեւ, որ կան նույն բովանդակությանը վերաբերող չորս այլ արձանագրությունների մասեր՝ տառերի տարբեր չափերով եւ գրությամբ. ըստ երեւույթին, կարեւորելով արձանագրության բովանդակությունը՝ այն փորագրել են մի քանի տեղում (հնարավոր է՝ տարբեր ժամանակներում):

Կարելի է ասել, որ Գնդեվանքը ոչ միայն ճարտարապետական, այլեւ գրական-վիմագրական առումով արժեքավոր ստեղծագործություն է:



Սմբատ Բ Բագրատունի թագավորը 989 թ. նախաձեռնեց Անի քաղաքի կրկնաշարք պարիսպների կառուցումը եւ հզորացումը: Դրանք գեղարվեստորեն ձեւավորեց բարձրաքանդակներով, նախշազարդ խորհրդանշաններով, խաչքարերով, արձանագրություններով, նաեւ՝ կեռախաչով (սվաստիկ): (Ենթադրվում է, որ կեռախաչը խորհրդանշում է արեւ, կրակ, կայծակ, կյանքի հարատեւություն եւ այլն: Հետագայում այն դարձավ Ֆաշիստական Գերմանիայի պետական խորհրդանշանի կարեւոր տարրը): 1930-ական թվականներին Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտում ճարտարապետության պատմություն առարկայի դասավանդման ժամանակ խոսք է բացվում նաեւ Անիի պարսպապատերի կեռխաչի մասին, ինչը՝ իբրեւ ուսանողության շրջանում «ֆաշիստական ագիտացիա», պատճառ է դառնում այդ առարկայի ազնվագույն եւ քաղաքականության հետ որեւէ կապ չունեցող դասախոսին՝ Վ. Տեր-Ավագյանին (որ եղել է նաեւ իմ սերնդի կողմից սիրված ուսուցիչը), մի քանի տարի բանտերում տառապեցնել:

Ինչպես ամեն մի ստեղծագործական բնագավառում, այնպես էլ ճարտարապետության մեջ շատ կարեւոր է կերպարի խնդիրը. թե շենքն իր տեսքով, հատակագծային, ծավալատարածական հորինվածքով որչափով է համապատասխանում իր գործառնությանը: Ականավոր ճարտարապետ Կարո Հալաբյանը 1934-1940 թթ. Վ. Սիմբիրցեւի հետ նախագծել է Խորհրդային բանակի թատրոնի շենքը Մոսկվայում, որին հատակագծում, կապելով պետական խորհրդանիշի հետ, տրվել է հնգաթեւ աստղի ձեւ, ինչը համարվեց աններելի մեղք՝ արժանի ամենախիստ պատժի: Այդ մասին Կ. Հալաբյանի որդին գրել է. «Անաստաս Միկոյանն իր հերթին փրկեց Կարոյին 1947 թ., երբ Բերիայի կարգադրությամբ նրան պետք է բանտարկեին՝ մեղադրելով ֆորմալիզմի, կոսմոպոլիտիզմի, ճապոնական հետախուզության հետ ունեցած կապի մեջ...» (Ակնարկներ Ռուսաստանի ճարտարապետների միության պատմության, Մ., 2004, էջ 92-93): Նման խորհրդանշական-պայմանական մոտեցումներ միշտ էլ եղել են ճարտարապետական-քաղաքաշինական պրակտիկայում: Հենց Կ. Հալաբյանը Մ. Մազմանյանի հետ ավելի վաղ՝ 1932-ին, Երեւանի Գրիգոր Լուսավորչի փողոցի վրա նախագծել է «շախմատաձեւ» ճակատով հանրահայտ բնակելի տունը:

Երեւան քաղաքի հիմնադրման 2750-ամյակի հետ կապված՝ Շահումյանի պուրակի երկարությամբ ստեղծվեց ջրավազան՝ ճիշտ 2750 ջրային շիթերով:

Մոսկովյան փողոցից դեպի Հովհ. Թումանյանի թանգարան տանող աստիճանների քանակը 54 է. այնքան, որքան տարի ապրեց մեծ բանաստեղծը:

Կամ՝ Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին նվիրված կոթողի բարձրությունը, ասում են, 50 մ է եւ այլն:

Ո՞ւր ասես, որ չի թչում ստեղծագործող մարդու (այս դեպքում՝ ճարտարապետի) անսանձ երեւակայությունը:

***Գառնիկ ՇԱԽԿՅԱՆ***
***Ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր***

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ...

*Սկիզբը՝ էջ 5*

Ի՞նչ էր Օշինի ծրագիրը, եւ ինչո՞ւ էին նրան հակադրվում ոտարամոլները:

Նախ եւ առաջ հայոց պետականության ամրապնդումը եւ հայոց արքունիքն օտար ազդեցությունների վարակից ախտազերծելը: Դա գերագույն նպատակ էր, որի համար արժեր ամեն զոհողություն: «Իմ ուզածս ուրիշներուն ուզածը չէ,- ասում է Օշինը Մխիթարին:- Ինչ որ ինծի համար նպատակ մըն է ինքնին, ուրիշներուն համար միջոց է ելքի ու վայելքի: ...Միտք մը պիտի հասուննա կյանքին մեջ, ինչպես պտուղը ծառին վրա: Նախ կարծեցի՝ ետեւես ինծի նման մտածող բազմություններ կան, գուցե քիչ մը վարանոտ, ետքը հուսացի, որ ետեւես ինծի նման բազմություններ պիտի գան. հաշիվս սխալ դուրս եկավ»: Անձնական շահախնդրություններով ապրող մյուս պետական այրերը ո՛չ մտավորապես, ո՛չ բարոյապես հասունացած չէին ըմբռնելու Կիլիկիայի հայոց պետության արժեքը, դրա համար էլ խստակյաց ու խստապահանջ, հասուն Օշինը բոլոր տհասների ու խակերի աչքի փուշն էր:

Պալատում, հակառակ թանձրամիտ ու շահախնդիր պալատականների, միայն Մխիթար հայր սուրբն է հավատարիմ մնում Օշինին, եւ միայն նա է ճիշտ ըմբռնում ու համզգում ազգային վեհ նպատակների նվիրյալ ու կամավոր զոհ Օշինին, որն արդեն հասել էր վերջնականապես դժբախտանալու ու ոչնչանալու եզրին: Օշինն ինքն էլ էր գիտակցում իր պարտությունն ու վիճակի ողբերգականությունը, բայց ուներ մխիթարական մի բան. ինքը մաքուր է իր մարդկային պարտքի ու խղճի առջեւ, զոհաբերել էր իր համար ամեն թանկ բան ամենից թանկագինի համար: Իսկ եթե ինքը հաջողության չէր հասել, մեղավորը աշխարհի չար ուժերն են, որոնք թե՛ դրսում են, թե՛ ներսում: Դրսի թշնամիների դեմ պայքարելը անհամեմատ դյուրին էր. մարդկայնորեն ու հոգեբանորեն ամենից դժվարը ներսի ուժերի՝ յուրայինների դեմ պայքարն էր, որը տանելու էր դեպի ինքնաոչնչացում: Իր ամենասիրած մարդկանցից մեկին՝ Հեթումին նա վաղօրոք հեռացնում է Սիս մայրաքաղաքից, որ գոնե չմնա կործանվող պետության փլատակների տակ: Ուրեմն՝ Օշինը հասկացել էր իր պարտության եւ Կիլիկյան պետության փլուզման անխուսափելիությունը: Աֆորիզմի պես է հնչում Օշինի ներքին հոգեվերլուծությունը.

«ՕՇԻՆ - Դուն գիտե՞ս ինչ բան է, երբ հոգիիդ առջեւը կտեսնես, որ կքայքայվին սիրած ծրագիրներդ, կտարտղնին հիմնած հաստատությունները: ... ***Եվ ով հոգիին մեջ պարտված է, անոր համար փրկություն չկա: Մարդիկ նախ հոգիին մեջ կհաղթվին, հոգիին մեջ չհաղթվածը անպարտելի է: Թող տարի մը առաջ ըլլար այս հարձակումը իմ վրաս՝ անոնք քաղա՞ք կառնեին իմ ձեռքես, անոնք այս պալատը ո՞տք կդնեին***» (նույն տեղում, էջ 781, ընդգծ. մերն են - Ս. Մ.):

Հենց այստեղ է խորանում Օշին պայլի ներքին դրաման, որը վերածվում է կատարյալ ողբերգության: Պետության եւ թագավորի հանդեպ պարտքի ազնիվ զգացումը նրան վեր է կանգնեցնում բոլորից: Նրա տապալվող կյանքն արդեն մի պատռված ու անարժեք զինանշան է, որն այլեւս պաշտպանության կարիք չունի: Սակայն բոլոր դեպքերում պաշտպանության կարիք ունեն պետությունն ու թագավորը.

«ՕՇԻՆ - Անգամ մը բարձրացուցեր եմ այս դրոշակը, հանձն եմ առեր պետության պաշտպանությունը, Լեւոնի ժառանգությունը եւ Լեւոնը ինքը. խնամակալ եմ ու հայրացուն. պետք է խաղամ իմ դերս մինչեւ վերջը. ո՞ւր թողնեմ, որո՞ւն թողնեմ, ինչպես լքեմ թագավորը...»:

Իրականում, ըստ պատմիչների, Օշին պայլն ու իր դուստր Ալիս թագուհին սպանվել են Լեւոն թագավորի հրամանով՝ նրա դեմ թշնամաբար տրամադրված մարդկանց ձեռքով: Սակայն Լ. Շանթը պատմական փաստերի մեջ ընտրություն կատարելիս ճիշտ է կողմնորոշվել՝ նրան մինչեւ վերջ ներկայացնելով որպես հայոց պետականությանը եւ իր սիրուն նվիրյալ գործչի, որը Ռիտայի առաջարկած փրկության վերջին ու միակ հնարավորությունից անգամ հրաժարվում է՝ ավելորդ համարելով այն կյանքը, որ պիտի ապրեր առանց հայոց պետականությանը ծառայելու: Ողբերգության հանգույցը լուծվում է իր ճակատագրին հլու Օշինի կամավոր պարտությամբ: Սակայն որովհետեւ նա չի էլ դիմադրում իր դեմ ապստամբած ու իրեն մահով սպառնացող պատանի խնամարկյալին, ընդհակառակը, հրամայում է բացել դարպասները, որպեսզի նա, հետնամուտքերով ու գողունի գահ բարձրանալու փոխարեն, արժանապատիվ ու շիտակ ճանապարհով հասնի հայոց արքայական բարձունքներին:

***Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 13-18-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

*Սկիզբը՝ էջ 4*

*«Պատմութիւն համառաւտ անաւրէն Թամուրին, որ ելեալ ի յաշխարհէն Խորասանու եւ գնաց մինչեւ ի ծովն Ովկիանոս, արարեալ Թովմա Վարդապետի»* (տե՛ս **Թովմա Մեծոփեց,** Պատմագրություն, Ե., «Մագաղաթ», 1999, տե՛ս նաեւ՝ Պատմութիւն Լանկթամուրայ եւ յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860) աշխատությունը նվիրված է 1386-1446 թթ. Հայաստանում կատարված իրադարձություններին: Գրված է տարեգրության սկզբունքով: Հայոց երկրին պատուհասած ավերի ու ավարի հերթական դառնաշունչ էջն է: Դրանով ավարտվում է թաթար-մոնղոլների արշավանքների պատմությունը:

Նա գրել է նաեւ մի աշխատություն՝ հայրապետական աթոռը 1441-ին Սսից Էջմիածին տեղափոխելու մասին՝ *«Մայր աթոռի վերադարձ Ս. Էջմիածին»* (*«Յիշատակարան»*, Թիֆլիս, 1892): Նա ստեղծել է հայոց լեզվի ուսուցման դասագիրք՝ *«Յաղագս իմաստութեան անվարժ տղայից ուսման»*: Թողել է թղթեր, որոնք հարուստ տեղեկություն են պարունակում ժամանակի մասին: Նրան են պատկանում նաեւ հետեւյալ աշխատությունները՝ *«Մեկնութիւն Դանիել Մարգարէի»*, *«Խրատ յաղագս պաշտամանց եկեղեցւոյ»*, *«Կարգ աւծման հիւանդաց»*:



Այլ գործիչներից հայտնի են **Վարդան Հաղպատցին, Գրիգորը (որդի Աբասի), Պողոս Տարոնեցին, Վարդան Պատմիչը, Մատթեոս Ջուղայեցին, Գեւորգ Երզնկացին,** որոնք գրել են ճառեր, քարոզներ, մեկնություններ, խրատներ:

Մատենագրությունը, որ ոչ միայն պատմագրության, այլեւ գեղարվեստական արձակի դրսեւորումներից է, հետագա տարիներին պահպանվում եւ զարգանում է նաեւ այլոց ստեղծագործության մեջ: Կիրակոս Գանձակեցուն, Ստեփանոս Օրբելյանին եւ նշված պատմիչներին հաջորդում են **Գրիգոր Դարանաղցին, Դավիթ Բաղիշեցին, Հակոբ Կարնեցին, Վարդան Բաղիշեցին, Առաքել Դավրիժեցին, Զաքարիա սարկավագ Քանաքեռցին, Երեմիա Քյոմուրճյանը, Աբրահամ Կրետացին, Հովհաննես Սեբաստացին** եւ ուրիշներ: Անգամ Միքայել Չամչյանի *«Հայոց պատմութիւն»*-ից հետո (3 հատորով, 1784-1786), երբ թվում է, թե մատենագրությունը պետք է դադարեր, այն դեռեւս շարունակվում է՝ հարկ եղած դեպքերում հենվելով Չամչյանի աշխատությանը:

**Առաքել Դավրիժեցին** (1591/1596 - 1670) Էջմիածնում կրթվելուց հետո ստացել է վարդապետի աստիճան: 1636-ին Հովհանավանքի վանահայրն էր, որպես վեհափառ հայրապետի նվիրակ եղել է Սպահանում, Ուրֆայում, Հալեպում, Աթենքում, Երուսաղեմում: Փիլիպոս Աղբակեցի վեհափառի պատվերով, ապա՝ նրան հաջորդած Հակոբ Ջուղայեցու օրոք՝ 1651-1662 թթ., գրել է պատմությունը, որն իր կենդանության օրոք լույս է ընծայել Ոսկան Երեւանցին (Գիրք պատմութեանց շարադրեալ վարդապետին **Առաքելոյ Դաւրէժացւոյ,** յԱմսթելոդամում, 1669): Հետագայում գիրքն ունեցել է այլ հրատարակություններ (**Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ,** Վաղարշապատ, 1884, 1896) եւ փոխադրվել աշխարհաբարի (**Առաքել Դավրիժեցի,** Պատմություն, Ե., «Սովետական գրող», 1988, աշխատասիրությամբ Վ. Առաքելյանի):

Իր պատմության մեջ Դավրիժեցին նկարագրում է հայ կյանքը 1602-1662 թթ.: Դա թուրք-պարսկական պատերազմների, Շահ-Աբասի կողմից հայ ժողովրդի բռնագաղթի, երկրի ավերման, սովի, նաեւ լեհահայ գաղութի կյանքի, հակակաթոլիկ շարժման տարիների պատմություն է: Աբեղյանն առանձնապես դրական չի տրամադրված Դավրիժեցու պատմության հանդեպ եւ այն համարում է «զանազան զրույցների անմշակ ժողովածու» (**Մ. Աբեղյան,** Երկեր, հ. Դ, Ե. ԳԱ հրատարակչություն, 1970, էջ 524): Իրականում Դավրիժեցու գիրքը, այո՛, առատ է զրույցներով, բայց այն ստուգապատում պատմություն է: Այլ բան, որ հեղինակն ազատ է իր շարադրանքի, նաեւ ոճի մեջ: Զանազան հետաքրքրաշարժ պատմությունները՝ զրույցները, նկարգրությունները, դեպքերը, անդրադարձները ավելի են կենդանացնում նրա խոսքը եւ խառնակ ժամանակների մղձավանջի մեջ ստեղծում կյանքի իրական պատկերներ:

Առաջաբանում պատմագրության եւ իր գրքի մասին Առաքել Դավրիժեցին այսպիսի կարծիք է հայտնում. «Նաեւ հարկավոր է գիտենալ, որ ըստ անհրաժեշտության այդտեղ պետք է թվականը [ժամանակը] դրվի իբրեւ հիմք, ապա նաեւ նրա վրա հենվի պատմությունը իբրեւ շինվածք՝ ըստ պատմագրքերի օրենքների: Բայց քանի որ մեր ազգը ավարառուների, գերիչների, հարկահանների կողմից ցիրուցան է եղել, ջարդվել, կապկպվել, տառապել եւ կապված է եղել աղքատությանը՝ ըստ Սաղմոսի [ՃԶ, 10], եւ ամեն մեկը հազիվ էր իր կյանքի ապրուստը հայթայթել, ուստի չգտանք որեւէ այնպիսի գիտակ անձ, որ պատմության հետ նաեւ թվականը իմանար» (**Առաքել Դավրիժեցի,** Պատմություն, էջ 17):

Պատմության մի ծայրին թեեւ Կոստանդնուպոլսի գրավումն է եւ հայոց վեհափառների պատմությունը, բայց բուն սկիզբը Շահ-Աբասի արշավանքներն են Հայաստան: «Արագընթաց եւ օդասլաց» երիվարներով Շահ-Աբասը հարձակվում է օսմանյան զորքերի վրա, որոնք դիրքեր էին բռնել Երեւանում, ջարդում եւ փախցնում նրանց: Թուրքերի հակագրոհի ժամանակ շահը չի գնում առճակատման եւ պատերազմը շարունակում է վառած հողի սկզբունքով: Կարինի, Շիրակի, Արճեշի, Բասենի, Խնուսի, Արարատյան դաշտավայրի բազմաթիվ գյուղերից նա հավաքում է տասնյակ հազարավոր հայերի, այրում նրանց թողած տունն ու ունեցվածքը եւ, ինչ որ շարժվում էր, քշում Պարսկաստան: Գիրք ծննդոցին այստեղ փոխարինում է գիրք գաղթությանցը:

*Շարունակելի*

***Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

**Հայր Անատոլի ԲԵՐԵՍՏՈՎ**
**Բժշկական գիտ. դոկտոր**

# ՄԵՂՔ, ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ, ԲԺՇԿՈՒՄ

## Զրույց երկրորդ

*Սկիզբը՝ թիվ 13-15*

**- Ինչպե՞ս կարելի է բացատրել մարդկանց այն բուռն ձգտումը օկուլտական բուժամիջոցների, ժողովրդական բժիշկների, հեքիմների հանդեպ, եւ ինչպե՞ս է Ուղղափառ Եկեղեցին վերաբերում բուժման նման մեթոդներին:**

- Նախ՝ եկենք պարզենք, թե ի՞նչ է օկուլտիզմը:

Խորհրդային Մեծ հանրագիտարանն (1974 թ., հ. 18, էջ 384) այսպես է բնորոշում օկուլտիզմը. «Օկուլտիզմը (լատ. occultus - խորհրդավոր, գաղտնի) ընդհանուր անվանումն է մի ուսմունքի, որն ընդունում է, թե մարդու եւ տիեզերքի մեջ գործում են թաքնված այնպիսի ուժեր, որոնք հասու չեն մարդկային սովորական կենսափորձին, սակայն հասու են «ընծայվածներ» կոչվածներին, որոնք անցնում են հատուկ իմացությունների, իրազեկումների եւ հոգեբանական պատրաստվածության միջով»:

Ընծայվողի «ձեռնադրության» ծիսակարգի նպատակը նրա՝ «գիտակցութան բարձր աստիճանի» ձեռք բերման գնահատումն է, ինչը հնարավոր է դարձնում, այսպես կոչված՝ «փակ գաղտնիքներին» մերձենալու իրավունքը: Հենց այդ, այսպես կոչված՝ «փակ գաղտնիքների» հիմքում ընկած է կախարդությունը, մոգությունը, որոնցից հասարակական կյանքի հրապարակ են հայտնվել էքստրասենսորիկան (վերզգայականությունը), բիոէներգետիկան (կենսաէներգետիկան), ուֆոլոգիան եւ այլն: Վերջին տարիներին օկուլտական գիտությունները՝ էքստրասենսորիկան, ուֆոլոգիան, կարմայի մասին ուսմունքը (մարդու գործողությունների հանրագումարը եւ դրանց բարոյական գնահատականը), հիպնոսը, պարապսիխոլոգիան (մերձհոգեբանությունը), աստղագուշակությունը եւ այլն, առանձնահատուկ լայն տարածում են ստացել մանավանդ գիտամերձ մտավորականության շրջանում:

Օկուլտիստական գիտությունները մեր երկիր են թափանցել ե՛ւ Արեւմուտքից, ե՛ւ Արեւելքից: Մեծամասամբ դա կապված է գաղափարական եւ հոգեկան պլյուրալիզմի զարգացման կամ էլ հասարակության ժողովրդավարացումի ֆոնին ընթացող ամենաթողության հետ: Այսօր մեր աչքի առաջ տեղի է ունենում մի սարսափելի հոգեւոր ագրեսիա ե՛ւ Ռուսաստանի, ե՛ւ առաջին հերթին՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցու դեմ (նույն բանն է կատարվում նաեւ Հայաստանում - թարգմ.): Հենց այդ նպատակով էլ հսկայական միջոցներ են հատկացվում, որպեսզի թե՛ ներսից եւ թե՛ դրսից թուլացնեն ուղղափառությունն ու Եկեղեցին: Հավանաբար քչերը գիտեն, որ միայն 1994 թ., օրինակ, ԿՀԿ 150 միլիոն դոլար է ծախսել Ռուսաստանի դեմ հոգեւոր ագրեսիա իրականացնելու համար: Հենց միայն Սիբիր ուղարկվել են մի ամբողջ բանակ զանազան հակաուղղափառ քարոզիչներ, որոնք էլ մեզանում կազմավորեցին ամեն տեսակ աղանդներ ու դպրոցներ, որոնց թվում նաեւ՝ օկուլտիստական:

Մյուս կողմից էլ՝ աշխարհում լավագույնը համարվող մեր առողջապահության համակարգի փլուզումը, անվճար բարձրակարգ բժշկական օգնություն ստանալու հնարավորության բացակայությունը (բժշկությունն այսօր մեզանում եւս դարձել է առեւտրի առարկա, այն էլ՝ բավականին թանկ), ներմուծվող դեղերի աննախադեպ թանկ գները, դեղատնային ցանցից շատ անհրաժեշտ դեղամիջոցների անհետացումը, անթիվ-անհաշիվ էքստրասենսների, կախարդների, շամանների, հեքիմների հայտնվելն ու մատչելի գներով իրենց ծառայությունները մատուցելը, բնակչության կրոնական տգիտությունը բնականաբար հանգեցրին օկուլտական բուժօգնությանը դիմելու կտրուկ ավելացմանը եւ շատ անհավատ կամ էլ տկարահավատ մարդկանց՝ դրանց հանդեպ ձգտումին:

Ի դեպ, պետք է ասել, որ մեր Եկեղեցու վերաբերմունքն օկուլտական միջոցներով բուժումների հանդեպ միանգամայն մերժողական է:

Ինչո՞վ են սարսափելի օկուլտական մեթոդներով բուժումները: Հիպնոսը, մեդիտացիան, էքստրասենսորիկան, կախարդությունը, կոդավորումը կիրառում են մարդու հոգեկառուցվածքի վրա բռնի կերպով ազդելու մեթոդներ, ճնշում գործադրում նրա կամքի վրա՝ մշակելով մարդու՝ ուրիշի՝ հիպնոսիստի, կախարդի եւ այլոց կամքին ենթարկվելու պահվածք: Ներգործելով մարդու ենթագիտակցության վրա՝ նրանք այնտեղ են ներմուծում մտածողութան ու վարքագծի իրենց ծրագիրը: Այդ ծրագիրը, պատվաստվելով գիտակցության մեջ, որոշարկում է մարդու պահվածքը, արարքները եւ նույնիսկ մտածողության կերպը: Նրան թվում է, թե ինքը գործում է իր կամքով, իր ցանկությամբ, այնինչ իրականում նա կատարում է ուրիշի, ուրիշ մի հոգու կամքը: Նման բռնի ազդեցությունը սահմանափակում է մարդու անհատականությունը, հաշմում կամքը, փոխում վարքն ու բարքը, մտածողությունը: Մարդը դառնում է մի տեսակ կենսառոբոտ, նրանում սպանվում է Աստծո պատկերը:

Ամեն ոք իր մեջ կրում է Աստծո պատկերը, որքան էլ նա վատ ու ընկած լինի: Մարդու մեջ Աստծո պատկերն այն է, որ մարդն ունի Աստծուն բնորոշ հատկություններ՝ բանականություն, կամքի ազատություն, անմահ հոգի: Մարդուց վերցնելով նրա կամքը



եւ ուրիշինը պարտադրելով, փոխելով նրա վարքագիծն ու մտածողությունը՝ օկուլտիստները մարդու մեջ ճնշում են Աստծո պատկերը, նրա հոգին ենթարկում իրենց: Ըստ Եկեղեցու սուրբ հայրերի ուսմունքի՝ մարդը կարող է գործել իր, Աստծո եւ դեւերի կամքի համաձայն: Վերջիններս իրենց կամքը պարտադրում են միջնորդների, տվյալ դեպքում՝ կախարդների, էքստրասենսների, հիպնոսիստների միջոցով:

Եկեղեցու եւ Սուրբ Գրքի կողմից միանշանակորեն մերժվելուն հակառակ՝ էքստրասենսորիկան, բիոէներգետիկան, կախարդությունը, մոգությունը եւ մնացյալ սեւ հոգեհմայչությունները գնում են վտանգավոր ճանապարհով. էքստրասենսը, կախարդը իրենց մեղսալի, անմաքուր հոգով ներխուժում են հոգեւոր աշխարհ եւ հասնում որոշակի բուժական արդյունքի, սակայն նրանք, միանշանակորեն, հաղորդվում են հոգեւոր աշխարհի միայն բացասական էներգիայի հետ:

*Շարունակությունը՝ էջ 8*

# ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅՈՒՄ

*Սկիզբը՝ թիվ 15*

## բ) Ղազախստան

Ղազախստանում հայերը զանգվածաբար սկսել են հաստատվել միայն 19-րդ դ. երկրորդ կեսին՝ ռուսահպատակ Արեւելյան Հայաստանից եւ միջինասիական այլ տարածքներից: Նրանց զանգվածային հոսքը շարունակվել է նաեւ 1937-1949 թթ. (ստալինյան բռնությունների աքսորյալներ):

1950-80-ական թթ. Ղազախստանում հաստատվել են հազարավոր հայեր՝ անսահման խոպան հողատարածքները գյուղատնտեսական հողահանդակների վերածելու համար:

Չնայած հայ համայնքի շարունակական աճին՝ 1950-80-ական թթ. հայերի ազգային կյանքը համակարգող կազմակերպություն Ղազախստանում չի եղել: 1990-ական թթ. կեսերից միայն հայերը կարողացել են կարգավորել իրենց ներհամայնքային կյանքը՝ հիմնելով հայկական մշակույթի կենտրոն եւ նրան կից կիրակնօրյա դպրոց (Ալմա Աթա): 1995 թ. Ալմա Աթայում կատարվել է հայկական եկեղեցու հիմնօրհնեք՝ պետության կողմից տրամադրված հողատարածքում:

1999 թ. Ղազախստանում հայերի թիվը հասել է 20 հազարի, իսկ 2003 թ.՝ 25 հազարի (Ղազախստանի բնակչության շուրջ 0,17 %-ը): 1990-ական թթ. վերջին հայերի թվի աճ տեղի էր ունենում գլխավորապես Ալմա Աթայում, Կուստանայում, Կարագանդայում եւ Ակտյուբինսկում:

Վերջին տարիներին հայ համայնքի աճը տեղի է ունենում ի հաշիվ նոր մայրաքաղաք Աստանայի, որտեղ հայ համայնքը նոր է գոյանում:

Մոտավոր հաշվարկներով՝ ներկայումս (2009 թ.) Ղազախստանում հայերի թիվը կարող է հասնել ընդհուպ 30 հազարի, որի զգալի մասն ապրում է նախկին մայրաքաղաք Ալմա Աթայում:

## գ) Ղրղըզստան

Ղրղըզստանում հայերը զանգվածաբար սկսել են հաստատվել միայն 19-րդ դ. երկրորդ կեսին՝ ռուսահպատակ Արեւելյան Հայաստանից (Արցախ, Սյունիք, Նախիջեւան) եւ Իրանից: Նրանց զանգվածային հոսքը շարունակվել է նաեւ 1920-ական թթ.՝ հիմնականում միջինասիական հարեւան տարածքներից:

1990-ական թթ. կեսերին հայերի թիվը Ղրղըզստանում հասել է 4 հազարի, իսկ 1999 թ.՝ 5 հազարի: 2003 թ. Ղրղըզստանում բնակվում էր ավելի քան 3 հազար հայ (Ղրղըզստանի բնակչության շուրջ 0,06 %-ը):

Ներկայումս (2009 թ.) նույնպես Ղրղըզստանում բնակվում է շուրջ 3 հազար հայ՝ գրեթե ամբողջությամբ մայրաքաղաք Բիշքեքում: Հայ համայնքն ունի մշակութային կենտրոն եւ կիրակնօրյա դպրոց:

## դ) Տաջիկստան

Ինչպես եւ միջինասիական այլ տարածքներում, այնպես էլ Տաջիկստանում հայերը զանգվածաբար սկսել են հաստատվել միայն 19-րդ դ. երկրորդ կեսին՝ Արցախից, Սյունիքից, Նախիջեւանից եւ Իրանից:

19-րդ դ. վերջին Տաջիկստանի տարածքում հայերն ունեցել են առեւտրի մենաշնորհ, տիրապետել են նավթարդյունահանման, էլեկտրաէներգիայի արտադրության եւ բամբակի հումքի զգալի մասին:

1994 թ. Տաջիկստանում շուրջ 6 հազար հայ էր բնակվում: Քաղաքական անկայուն վիճակի պատճառով հայերի թիվը շարունակաբար նվազում էր: Արդյունքում 1996 թ. հայ համայնքն ընդգրկում էր արդեն 5 հազար մարդ: 2003 թ. Տաջիկստանում բնակվում էր 3 հազար հայ (Տաջիկստանի բնակչության շուրջ 0,04 %-ը):

Ներկայումս (2009 թ.) նույնպես Տաջիկստանում բնակվում է շուրջ 3 հազար հայ՝ գրեթե ամբողջությամբ մայրաքաղաք Դուշանբեում: Հայ համայնքն ունի մշակութային կենտրոն:

## ե) Ուզբեկստան

Ուզբեկստանում հայերը զանգվածաբար սկսել են հաստատվել միայն 19-րդ դ. երկրորդ կեսին՝ կրկին Արցախից, Սյունիքից, Նախիջեւանից, Իրանից, ինչպես նաեւ Աստրախանից, իսկ դարավերջին՝ նաեւ Արեւմտյան Հայաստանից:

19-րդ դ. վերջին եւ 20-րդ դ. սկզբին մեծ թվով հայ բանվորներ են հաստատվել Ուզբեկստանի տարածքում, մասնավորապես՝ Սամարղանդում, Ֆերգանայում, Տաշքենդում, Կոկանդում, Բուխարայում եւ Անդիժանում:

19-րդ դ. վերջին հայերն սկսում են մեծ դեր խաղալ Ուզբեկստանի տնտեսական կյանքում:

1909 թ. հայերի թիվը հասնում է արդեն 2,4 հազարի, որոնց մեծ մասն ապրում էր Ֆերգանայի (մոտ 1 200 հայ), Սամարղանդի (մոտ 800 հայ) եւ Սիրդարյայի մարզերում (ավելի քան 450 հայ):

1903 թ. Սամարղանդում կառուցվել է Ուզբեկստանում առաջին հայկական եկեղեցին՝ վաճառական Թադեւոս Հովսեփյանի միջոցներով: Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցին (Խրիմյան Հայրիկ, կթղ. 1892-1907 թթ.) հատուկ կոնդակով շնորհավորել է Թադեւոս Հովսեփյանին՝ այդ անչափ շնորհակալ գործի համար: Այնուհետեւ կառուցվել է Տաշքենդի Ս. Հռիփսիմե եկեղեցին:

1910 թ. կառուցվել է Կոկանդի հայկական եկեղեցին: Կարճ ժամանակ անց եկեղեցիներ են կառուցվել նաեւ Անդիժանում եւ Բուխարայում, որոնց կից գործել են հայկական ծխական դպրոցներ:

Մինչեւ 1892 թ. Ուզբեկստանի եւ Միջին Ասիայի բոլոր տարածքների հայկական եկեղեցիները պատկանել են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Շամախու թեմին, իսկ 1892 թվականից՝ Աստրախանի թեմին: 1920-22 թթ. Ուզբեկստանի հայկական եկեղեցիները հանձնվել են Բաքվի եւ Թուրքեստանի թեմին:

1930-ական թթ. հայկական եկեղեցիները փակվել են, եւ մեծ մասը՝ քանդվել:

Ամբողջ 20-րդ դ. ընթացքում Ուզբեկստանը միակ միջինասիական երկիրն է եղել, որտեղ հայերը միշտ ազատորեն են աշխատել եւ կատարել իրենց ներդրումը տնտեսության ու գիտության մեջ: Այդ իսկ պատճառով հայ համայնքը շարունակաբար աճել եւ բարգավաճել է: Եթե 20-րդ դ. սկզբին այստեղ ապրում էր ընդամենը 2,4 հազար հայ, ապա արդեն 1970 թ.՝ 34,2 հազար, 1979 թ.՝ 42,4 հազար, 1985 թ.՝ շուրջ 45 հազար, իսկ 1989 թ.՝ 50,5 հազար հայ:

Հայ համայնքը շարունակել է համալրվել նաեւ 20-րդ դ. վերջին եւ 21-րդ դ. սկզբին: Այսպես՝ 1990-ական թթ. կեսերին հայերի թիվը հասավ 55 հազարի, 2001 թ.՝ 60 հազարի, իսկ 2003 թ.՝ 70 հազարի (Ուզբեկստանի բնակչության շուրջ 0, 27 %-ը): 2003 թ. 32 հազար հայ ապրում էր Սամարղանդում (Սամարղանդի բնակչության շուրջ 8,63 %-ը), 30 հազար հայ՝ մայրաքաղաք Տաշքենդում (Տաշքենդի բնակչության շուրջ 1,42 %-ը), մոտ 8 հազար հայ՝ Անդիժանում (Անդիժանի բնակչության շուրջ 2,7 %-ը):

Ներկայումս (2009 թ.) Ուզբեկստանում մոտ 80 հազար հայ է ապրում, որոնց ճնշող մեծամասնությունը բնակվում է Սամարղանդում, Տաշքենդում եւ Անդիժանում: Փոքր թվով հայեր ապրում են նաեւ Ֆերգանայում, որտեղ ունեն մեծ թվով սեփականաշնորհված տարածքներ (ձեռնարկություններ, սրճարաններ եւն):



Սամարղանդում գործում է հայկական կիրակնօրյա դպրոց: 1995 թ. օգոստոսին վերաօծվել է Սամարղանդի Ս. Աստվածածին եկեղեցին, որն այժմ Միջին Ասիայում գործող միակ հայկական եկեղեցին է: Տաշքենդում եւ Սամարղանդում գործում են հայկական մշակույթի կենտրոններ:

Այսպիսով, ինչպես տեսանք, Միջին Ասիայում բնակվող շուրջ 9 միլիոն քրիստոնյաներից շուրջ 135 հազարն ազգությամբ հայ են, որոնց կեսից ավելին բնակվում է Ուզբեկստանում:

Տարածաշրջանում հայերի թվաքանակը վերջին երկու տասնամյակների ընթացքում, ընդհանուր առմամբ, քիչ է փոփոխվում, քանի որ, եթե Ուզբեկստանում եւ Ղազախստանում հայերի քանակն աճում է, ապա միջինասիական մյուս պետություններում հայերի թիվը նվազման միտում ունի:

Միջին Ասիայի հայկական համայնքները մի շարք առանձնահատկություններ ունեն ԱՊՀ անդամ մյուս երկրների համեմատ: Այդ առանձնահատկություններից առանձնացնենք առավել կարեւորները.

1. Միջին Ասիայում գոյություն ունեցող հայկական համայնքները գոյացել են միայն 19-րդ դ. երկրորդ կեսից սկսած՝ ռուսական նվաճողական քաղաքականությամբ պայմանավորված, եւ ամենաերիտասարդն են:

Ամբողջ 20-րդ դարն անցել է ռուսական իշխանությունների կողմից տարածաշրջանի տնտեսական յուրացման քաղաքականությամբ, ինչի հետեւանքով էլ հայերը հաստատվել են այս տարածաշրջանում: Սա այս տարածաշրջանի հայ համայնքի յուրահատկություններից մեկն է:

2. Այս տարածաշրջանի հայկական համայնքների կարեւորագույն առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ, չնայած խորհրդային տարիներին հայ հոգեւոր կյանքի բացակայությանը, այստեղ հայերը հավատարիմ են մնացել իրենց մայրենի՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն: Հայ կաթոլիկ եւ ավետարանական համայնքներն իսպառ բացակայում են:

Այսպիսով՝ Միջին Ասիայի հայկական համայնքները, հեռու գտնվելով իրենց հայրենիքից, պահպանում են ազգային նկարագիրը՝ հավատարիմ մնալով մայր Եկեղեցուն եւ մայրենի լեզվին:

*Միքայել ՄԱԼԽԱՍՅԱՆ*

# ՄԵՂՔ, ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ, ԲԺՇԿՈՒՄ



*Սկիզբը՝ էջ 7*

*«Երանի՜ նրանց, որ սրտով մաքուր են, որովհետեւ նրանք Աստծուն պիտի տեսնեն»* (Մատթ. Ե 8),- ասված է Ավետարանում: Իսկ ահա սրանք, անտեսելով Եկեղեցու արգելքը, ներխուժում են հոգեւոր աշխարհ՝ առանց մաքրելու իրենց մեղսալի հոգիները՝ ապաշխարությամբ:

Ուղղափառությունը, անշուշտ, իր առջեւ նպատակ չի դնում ձեռք բերել որեւէ գերբնական ընդունակություն. նրա նպատակն ապաշխարության, աղոթքի, պահքի, ժուժկալության, բարի գործերի եւ մարդու ու Աստծո նկատմամբ տածած սիրո միջոցով մեղավոր հոգիները մաքրելն է:

Քրիստոնեական կենսակերպի հիմքում ընկած են սերն ու հավատը, բարեգործությունը, ճգնությունը (պահքը, ժուժկալությունը): Քրիստոնեական ճանապարհին անցնում է բարոյական կատարելագործության միջով. *«Կատարյալ եղեք, ինչպես ձեր երկնային Հայրն է կատարյալ»* (Մատթ. Ե 48), եւ ոչ թե գերբնական ունակություններ ձեռք բերելու վարժանքների միջոցով՝ առանց ապաշխարությամբ հոգին մաքրելու, առանց սիրո, բարեգործության: Նման ճանապարհը վտանգավոր է, քանզի այն մարդուն առաջնորդում է չմաքրված հոգու հոգեւոր աշխարհ, Աստծո ու մարդու նկատմամբ սեր չպարունակող աշխարհ:

Կատարյալ սերը հանգեցնում է հնազանդության, իսկ հնազանդությունը հպարտության բացասումն է: Հպարտության մեջ մարդն իրեն զգում է ասես կատարյալ, մեծ, մարդկանցից լավագույնը, հզոր: Օկուլտիզմը մարդկանց մեջ զարգացնում է ձգտումն աշխարհի, բնության երեւույթների, մարդկանց վրա իշխանության, իսկ իշխանությունն անասելիորեն մեծարում է, բարձրացնում այդ մարդու հոգին, այսինքն՝ զարգացնում հպարտությունը, որը հանդիսանում է ուղածդ մեղքի սկիզբն ու վերջը: Հենց հպարտության միջոցով ընկավ Արուսյակը եւ հենց հպարտության պատճառով Երկրի վրա մեղք գործեցին առաջին մարդիկ՝ Ադամն ու Եվան:

Օձը, որի կերպարի մեջ թաքնված էր սատանան, ներշնչեց Ադամին ու Եվային. *«Աստված գիտեր, որ այն օրը, երբ դրանից ուտեք, կբացվեն ձեր աչքերը, եւ դուք կլինեք աստվածների նման...»* (Ծննդ. Գ 5): Մեղքի բուն էությունն անհնազանդությունն ու հպարտությունն են. *«Դուք կլինեք աստվածների նման»*: Բայց Աստված հակառակ է հպարտներին, իսկ հնազանդներին օրհնություն է բաշխում:

Հոգեւոր աշխարհ ներթափանցելն առանց բարոյական մաքրության եւ զղջումի եւ միայն ֆիզիկական ու հոգեւոր վարժանքների միջոցով, հանգեցնում է հպարտության զարգացմանը, զգալու իրեն ամենազոր, ունակ կառավարելու բնության տարերքները, մարդուն: Եվ շատ հաճախ նման հպարտությունը մարդուն գցում է հոգեկան ծանր հիվանդությունների մեջ եւ նրանում սպանում Աստծո անկրկնելի պատկերը:

*Շարունակելի*

*Թարգմ.՝ Ռ. ԱՐՈՅԱՆԻ*

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**

**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

**Հեռախոս՝ 517197**

**Էլ.փոստ՝**
**qh@etchmiadzin.am**

Ստոր. տպագր.
2 09. 2009 թ.

**Տպաքանակը՝ 2100**

**Գինը՝ 50 դրամ**